

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Երկու Ուշագրաւ Այցելութիւն

Երեք օր տարբերութեամբ Երեւան այցելեցին երկու հզօր պետութիւններու՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Ռուսաստանի հետախուզական ծառայութիւններու տնօրէնները, որոնք իրենց կարծատեւ կեցութեան ընթացքին հանդիպումներ ունեցան վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ:

Աւելի անակնկալ էր ԱՄՆ Կեդրոնական Զետախուզական Վարչութեան (CIA) տնօրէն Ուիլիըմ Պըրնզի այցելութիւնը, որու մասին նախապէս չէր յայտարարուած: Ուրբաթ օր Պըրնզի ժամանումին անդրադարձաւ ռուսաստանեան «Սփութնիք Արմինեան», իսկ երբ Զայաստանեան լրագրողները փորձեցին Ամերիկեան դեսպանատունէն ստուգել լուրի հաւաստիութիւնը, հոն ոչ հաստատեցին եւ ոչ ալ հերքեցին լուրը: Աւելի ուշ, տարածուեցաւ պաշտօնական հաղորդագրութիւն, որ վարչապետ Փաշինեան ընդունած է Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնէային, որուն հետ քննարկած է միջազգային եւ տարածաշրջանային հարցեր եւ Կովկասի մէջ տիրող իրավիճակը:

Յոս հարց կր ծագի թէ արդեօ՞ք Պըրնզի այցելութիւնը նախատեսուած էր որ մնար գաղտնի, սակայն Ռուսաստան, որ Զայաստանի մէջ ունի հետախուզական լայն ցանց, բացայայտած է Պըրնզի ժամանումը, Զայաստանի իշխանութիւններուն ստիպելով որ, հանդէս գան յայտարարութեամբ:

Իր կարծատեւ կեցութեան ընթացքին Ուիլիըմ Պըրնզի հրապարակային յայտարարութիւն չունեցաւ եւ խիստ անհաւանական է որ, ան եկած է քննելու Կովկասի մէջ տիրող իրավիճակը: Այդ պարագային ան պէտք էր այցելէր նաեւ Պաքու, որուն մասին ոչ մէկ տեղեկատուութիւն եղաւ:

Այս եզակի այցելութեան ծախքերը առայժմ կը մնան բացայայտուած:

Ուիլիըմ Պըրնզի այցելութեան երեք օր ետք, Երեւան ժամանեց Ռուսիոյ Արտաքին Զետախուզութեան Ծառայութեան տնօրէն Սերկէյ Նարիշքինը: Վարչապետի հետ հանդիպումէն ետք հրապարակուած յայտարարութիւնը ունէր գրեթէ նոյն բովանդակութիւնը:

Ի տարբերութիւն Ուիլիըմ Պըրնզի, Ռուս պաշտօնէան պատասխանեց ռուսաստանեան լրատուամիջոցներու հարցերուն, յայտարարելով թէ, Մոսկուան պատրաստ է աջակցելու Զայաստանին՝ նոր ստեղծուելիք

ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի Գաղտնի Սպասարկութիւններուն Ղեկավարները Այցելեցին Երեւան



ԱՄՆ Կեդրոնական Զետախուզական Վարչութեան Ղեկավար Ուիլիըմ Պըրնզի

Յաջորդական այցերով Երեւան ժամանեցին ԱՄՆ Կեդրոնական Զետախուզական Վարչութեան (CIA) տնօրէն Ուիլիըմ Պըրնզի եւ Ռուսիոյ Արտաքին Զետախուզութեան Ծառայութեան տնօրէն Սերկէյ Նարիշքինը:

Ըստ պաշտօնական հաղորդագրութիւններու, Յուլիս 15-ին վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է ԱՄՆ Կեդրոնական Զետախուզական Վարչութեան Ղեկավար Ուիլիըմ Պըրնզի:

Զրուցակիցները քննարկած են միջազգային եւ տարածաշրջանա-



Ռուսիոյ Արտաքին Զետախուզութեան Ծառայութեան տնօրէն Սերկէյ Նարիշքին

յին անվտանգութեան, ահաբեկչութեան դէմ պայքարին վերաբերող հարցեր:

Անդրադարձ կատարուած է Զարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ տեղի ունեցող գործընթացներուն:

Յուլիս 18-ին վարչապետ Փաշինեան ընդունած է Ռուսիոյ Արտաքին Զետախուզութեան Ծառայութեան տնօրէն Սերկէյ Նարիշքինը:

Զրուցակիցները քննարկած են

Զայաստանը Ամբողջովին Դուրս Կը Զանէ Իր Զօրքերը Լեռնային Ղարաբաղէն

Արցախի մէջ Հայաստանէն զօրակոչուած ժամկէտային զինուորներ պիտի չըլլան, իսկ պատերազմի ընթացքին Պաշտպանութեան բանակին օգնելու համար Արցախ գացած ստորաբաժանումներու՝ Հայաստան վերադառնալու գործընթացը պիտի աւարտի Սեպտեմբերին, «Արմենիա»-ին տուած հարցազրոյցին յայտարարած է Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը:

«Հրադադարի հաստատումից եւ Զարաբաղում Ռուսաստանի խաղաղապահների տեղակայումից յետոյ Հայաստանի Զինուած Ուժերի ստորաբաժանումների դուրսբերումը Զարաբաղից տրամաբանական է: Ինչ վերաբերում է Պաշտպանութեան բանակին, այն Լեռնային Զարաբաղում է եղել եւ շարունակուած է այնտեղ մնալ», նշած է ան:

Արմէն Գրիգորեան աւելցուցած է, որ այնուամենայնիւ, Հայաստանէն Պաշտպանութեան բանակ պայմանագրայիններ չեն զօրակոչուիր, Լեռնային Զարաբաղ կը կազմակերպէ պայմանագրայիններու ներգրաւումը:

Անվտանգութեան Խորհուրդի

Նախագահ Ծօ Պայտըն Այցելեց Երուսաղէմի Զայոց Եկեղեցին



Նախագահ Ծօ Պայտըն Բեթղեմի հայկական եկեղեցին այցելութեան ընթացքի՝

Իսրայէլ կատարած իր այցելութեան ընթացքին Միացեալ Նահանգներու նախագահ Ծօ Պայտըն այցելած է Բեթղեմի Մանդեան տաճարի հայկական եկեղեցին եւ հանդիպած՝ Երուսաղէմի հայոց պատրիարքին հետ:

Պատրիարք Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեան Պայտընի

հետ ունեցած առանձնազրոյցին ժամանակ շնորհակալութիւն յայտնած է անոր Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու համար եւ քննարկած են այլ թեմաներ:

Այս առթիւ Պատրիարքը նախագահ Պայտընին նուիրած է հայկական յախճապակիէ պատրաստուած պնակ եւ նուռ:

ԱՄՆ Ներկայացուցիչներու Տունը Վաւերացուց Զայանպատ Փոփոխութիւնները

ԱՄՆ Գոնկրէսի Հայկական Յանձնախումբի անդամները հանդէս եկած են օրէնսդրական շարք մը նախաձեռնութիւններով՝ առաջարկելով փոփոխութիւններ 2023 թուականի Ազգային պաշտպանութեան վաւերացման օրէնքին մէջ (FY 2023 National Defense Authorization Act):

Օրէնսդրական նախաձեռնութիւններէն արդէն դրական եզրակացութիւն ստացած են ԱՄՆ Ներկայացուցիչներու Տան Կանոններու յանձնաժողովին կողմէ, որուն համաձայնութեամբ՝ օրէնսդրական այս նախագիծերը քուէարկութեան պիտի դրուին ԱՄՆ Ներկայացուցիչներու Պալատի լիազուծար նիստին:

Գոնկրէսական Ատամ Շիֆի Թոնի Քարտենասի, Պրետ Շերմանի, ձեքի Սփիրզի եւ Քրիս Փափիւս ներկայացուցած փոփոխ-

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Ինչ Սպասել Թեիրանեան Զանդիպուլմից

ԷՄՍԱ ԲԵԳԻՉԱՆԵԱՆ

Յունիսի 24-ին Թեհրանում ՌԴ եւ ԻԻՀ ԱԳ նախարարներ Սերգեյ Լաւրովի եւ Հոսեյն Ամիրաբադոլահիանի համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարուեց, թէ նախագահ Վլադիմիր Փութինի այցն Իրան հաստատուել է, սակայն ժամկէտը դեռեւս յստակեցուած չէ: Յունիսի 12-ին ՌԴ նախագահի խօսնակ Դմիտրի Պեսկովը յայտարարել է, որ Փութինը Յունիսի 19-ին ժամանելու է Թեհրան, փաստօրէն, մէկ օր այն բանից յետոյ, երբ ԱՄՆ-ը Իրանին մեղադրել է հարիւրաւոր ռազմական ԱԹՍ-ներ Մոսկուային տրամադրելու համար: Տեղեկութիւն, որը եթէ միջազգային ՉՄՍ-ներում լուրջ արձագանք է գտել, յաճախ նոյնիսկ այցը հենց այս համատեքստով է կարեւորուել, ապա Իրանականում գրեթէ անտեսուել է: Իրականում էլ, հաշուի առնելով այդ երկրում գլխաւորապէս տնտեսական սահմանափակումներով պայմանաւորուած ծանր իրավիճակը, ինչպէս նշում են նաեւ որոշ փորձագէտներ, այդ քանակի ԱԹՍ-ների արտադրութիւնը հաւանական չէ:

Գազաթնաժողովի ձեւաչափն Աստանայի գործընթացն է լինելու, իսկ առանցքային հարցը՝ Սիրիայի իրավիճակը: Նոյն օրը Թեհրան է ժամանելու նաեւ Թուրքիայի նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտողանը:

Գազաթնաժողովում ըստ երեւոյթի կարեւորուելու է նաեւ Թուրքիայի յայտարարած՝ Սիրիայի հիւսիսում նոր ռազմական գործողութիւնների հարցը, որոնց նպատակն այդ երկրի հիւսիսում 30 քմ. խորութեամբ «անվտանգութեան» գոտի ստեղծելն է: ԱՄՆ-ը անմիջապէս դէմ է արտայայտուել Սիրիայի հիւսիսում քրտերի դէմ նոր գործողութիւններին, նախագգուշացրել, բայց միաժամանակ նշել է, որ Անքարայի մտահոգութիւններն անվտանգութեան առումով ընկալելի են: Ռուսաստանը եւս դէմ է արտայայտուել, ինչին ի պատասխան՝ Էրտողանը յայտարարել է, թէ երբ Անքարան ցանկանայ, գործողութիւններն սկսուելու են՝ յանուն երկրի անվտանգութեան, եւ ոչ ոքի թոյլտուութեանը չի սպասելու:

Յունիսի 26-ին Անքարայում Ամիրաբադոլահիանը եւս այդ առնչութեամբ նշել էր, որ Թուրքական կողմի մտահոգութիւններն անվտանգութեան հարցում հասկանալի են, ինչը վերլուծաբաններից ոմանք մեկնաբանել էին որպէս կանաչ լոյս նախապատրաստուող գործողութիւնների համար, սակայն միաժամանակ շեշտել, թէ բոլոր հարցերը պէտք է լուծել բանակցութիւնների միջոցով: Մինչդեռ Թեհրանը մշտապէս յայտարարել է, թէ Սիրիայի տարածքային ամբողջականութիւնն իր համար գլխա-

ւոր հարց է, ինչը կրկնեց նաեւ նման տեսակէտների հրապարակումից յետոյ:

Անդրադառնալով Աստանայի գործընթացին, նշենք, որ այն սկսուել է 2017 թ. Յունուարին, նշեալ երեք երկրների մասնակցութեամբ, որին յաջողուեց Սիրիայի 4 նահանգները «բախումնազերծ» գոտի յայտարարելով՝ կասեցնել հակամարտ ուժերի միջեւ բախումները, որոնք վերահսկում էին մասնակից երկրների կողմից: Իրանի եւ Ռուսաստանի վերահսկողութեանը յանձնուած «բախումնազերծ» յայտարարուած երեք նահանգները յանձնուեցին իշխանական ուժերին: Այդ ընթացքում յիշեալ ձեւաչափով տեղի ունեցաւ 3 գազաթնաժողով. առաջինը՝ 2017 թ. Նոյեմբերին Սոչիում, երկրորդը՝ 2018 թ. Ապրիլին Անքարայում, երրորդը՝ 2018 թ. Սեպտեմբերի 7-ին Թեհրանում, որտեղ առանցքային էր Իտլիպի հարցը: Փաստօրէն, ընդդիմադիր ուժերը վերահսկել եւ վերահսկում են միայն Իտլիպ նահանգը, որի հիմնական մասը ծայրայեղական, ահաբեկչական կազմակերպութիւններն են վերահսկում, ընդ որում՝ 60 տոկոսը՝ «Թահրիր ալ Շամը»՝ նախկին «Ալ Նուրան», որոնց հետ ի սկզբանէ Թուրքիան համագործակցել է: Դամասկոսն այդ նահանգի վրայ եւս վերահսկողութիւն սահմանելու նպատակով նախապատրաստուած էր Ռուսաստանի աջակցութեամբ յարձակումներ իրականացնել: Սակայն դրան խստիւ դէմ հանդէս եկաւ ոչ միայն Թուրքիան, որին

յանձնուել է մնահանգի հրադադարի վերահսկումը, այլեւ՝ Արեւմուտքը: Թուրքիան Իտլիպում 12 դիտակէտ է ստեղծել, տեղակայել 1300 զինուորականի եւ ձգտում է ամրապնդել դիրքերը, ուստի դրանք գինել է հակաօդային պաշտպանութեան համակարգերով: Մինչդեռ, եթէ իշխանական ուժերի վերահսկողութեան տակ անցնէր նաեւ այդ նահանգը, ապա Թուրքիայի դերակատարութիւնը Սիրիայում, կարելի է ասել, կը զրոյացուէր: Յաւելենք, որ Սիրիայի հակամարտութիւնում Թուրքիայի, Իրանի ու Ռուսաստանի դիրքորոշումները խիստ հակասական են եղել ի սկզբանէ:

Թեհրանեան գազաթնաժողովը թէեւ համատեղ յայտարարութիւն հրապարակեց, բայց օրակարգի գլխաւոր՝ Իտլիպի հարցը, չլուծուեց, ինչը պէտք է պատճառաբանել Սիրիայի տարածքային ամբողջականութեան եւ նախագահ Ասատին հովանաւորելու հարցում Ռուսաստանի համեմատութեամբ Իրանի առաւել կարծր ու անդիջում դիրքորոշմամբ: Հանգամանք, ինչի պատճառով Թեհրանեան գազաթնաժողովը, կարելի է ասել, ձախողուեց: Թուրքիան չստացաւ այն, ինչ ակնկալում էր: Ահա թէ ինչու մէկ շաբաթ անց Սոչիում տեղի ունեցաւ Փութին-Էրտողան երկկողմ հանդիպում, որի ընթացքում նրանց յաջողուեց համաձայնութեան գալ Իտլիպի հարցում, թէեւ յետագայում Անքարան բազմիցս անտեսել է պայմանաւորուածութիւնները: Յունիսի 19-ի գազաթնաժողովը երկրորդն է իրանում, որը, ռուս-ուրբանական հա-

Հայ-Թուրքական Արձանագրութիւններ Տապալող Եւ Վարդավառ Շնորհաւորող Էրտողանները

ՅԱԿՈԲ ԲԱՐԱՆԵԱՆ

Փաշինեան-Էրտողան հեռախօսազրոյցը հանրային դիտարկումներում հասկանալիօրէն արժանացել է մեծ ուշադրութեան, գործնականում լինելով հայ-թուրքական կարգաւորման գործընթացում դրական որոշակի առաջընթացի քաղաքական ծանրակշիռ վկայութիւն պարունակող քայլ: Այդուհանդերձ, պէտք է թերեւս նկատել, որ հայ-թուրքական կարգաւորման գործընթացն ունեցել է շատ աւելի սերտ եւ խօսուն դրուագներ, մասնաւորապէս ֆուտպոլային դիւանագիտութեան փուլում, ինչը սակայն մօտ մէկամեայ գործընթացից յետոյ յայտնուեց խորը փակուղում՝ զգրոցում, որտեղ փոշոտուեցին հայ-թուրքական արձանագրութիւնները: Իհարկէ սա ամենեւին համեմատութեան փորձ չէ, որովհետեւ հայէս տարբեր են թէ ռեգիոնալ, թէ առաւել եւս աշխարհաքաղաքական իրավիճակները: Աւելին, ներկայումս Էրտողանը քայլ անող է, այն պարագայում, երբ հենց Էրտողանն էր տասնամեակ առաջ սառեցնում «Փուտպոլային դիւանագիտութիւնը»: Ընդ որում, դա թերեւս տեղի էր ունենում այն մտայնութեամբ, որ հայ-թուրքական յարաբերութեան հարցը Թուրքիան դեռեւս կ'ունենայ առաւել բարձր գնով աշխարհաքաղաքական ասպարէզում իրացնելու հնարաւորութիւն: Մեծ հաշուով, Էրտողանի այդ հաշուարկը թերեւս արդարացի է, առաւելապէս ռուսամերիկեան դիմակայութեան շնորհիւ, որը սկսեց խորացման ինտենսիւ ռեժիմը 2011-12 թուականներից՝ ՌԴ նախագահի պաշտօնին

Փութինի վերադարձից յետոյ: Էրտողանի համար, որը Թուրքիայում այդ շրջանում մտնում էր իշխանութիւնն իր բուռը հաւաքելու եզրափակիչ փուլ, թերեւս տեսանելի էր, որ Փութինի վերադարձը նշանակելու է այսպէս ասած սառը պատերազմեան տրամաբանութեան վերադարձ ԱՄՆ-Ռուսաստան յարաբերութեան համատեքստում: Իսկ Անքարայի համար դա գործնականում քաղաքական դրախտ չէ, սակայն թերեւս ամենաչարմարաւէտ իրավիճակն է, որից Թուրքիան զգալիօրէն զրկուել էր ԽՍՀՄ փլուզումից յետոյ, երբ Ռուսաստանը աչքի էր ընկնում Արեւմուտքի հետ գործընկերութեան վարքագծով: Այդ իրադրութիւնը հայպէս նուազեցնում էր Թուրքիայի աշխարհաքաղաքական իմաստը, ինչը ամենեւին այդպէս չէ այսօր: Աւելին, Թուրքիայի նախագահ Էրտողանն ինքը թերեւս չուներ իր այն մասշտաբի խաղի ներքին հնարաւորութիւն, որը վարեց վերջին տասնամեակում՝ աւելի ու աւելի յաւակնոտ եւ ակրեսիւ: Նրա համար այդ խաղի հիմքը ոչ թէ ներքին ուժն էր, կամ աւելի շուտ՝ ոչ այնքան ներքին ուժը, որքան հենց ամերիկա-ռուսական սաստկացող դիմակայութիւնը, երբ Անքարան աւելի ու աւելի պահանջում էր դառնում թէ Ռուսաստանի, թէ ԱՄՆ համար: Դրա վկայութիւնն է այն, որ չնայած ամերիկա-թուրքական յարաբերութեան լարուածութեան սուր շրջափուլերին, Ուաշինգթոնն այդուհանդերձ չզնայ Անքարայի սանդղակայն ասած անդառնալի որոշումների, հասկանալով, որ դա կը

նշանակէր Թուրքիան ամբողջութեամբ մղել Ռուսաստանի գիրկը: Իսկ այսպէս, Ռուսաստանն ինքն է ստիպուած գրկախառնութեան առիթներ փնտրում եւ անգամ հասնում դրանց որոշակի զիջումների գնով, թէ կովկասում, թէ իր համար այլ կարեւոր եւ նշանակալի գոտիներում: Հայկական հանրութեանը ներկայումս անհրաժեշտ են ոչ թէ դրական կամ բացասական սպասումներ, այլ թերեւս հանգամանալից եւ բազմաոլորտ քննարկումներ՝ երկու առանցքային պատճառով: Նախ, հայ-թուրքական յարաբերութեան հարցը հայկական պետականութեան թերեւս անկիւնաքարային հարցն է, այդպէս է եղել գործնականում միշտ՝ բայց նաեւ այդ առումով հայպէս թերազնահատուած ու անտեսուած, եւ այդպէս է ներկայումս: Ու հենց այդ պատճառով է նաեւ, որ գոնէ ներկայիս բախտորոշ շրջափուլում չկայ այդ հարցը նախկինի պէս անտեսելու «շուայութեան» հնարաւորութիւն, կամ զգայական-մանիպուլիատիւ մեթոտներով շահարկելու իրաւունք: Եւ միւսը՝ հայ-թուրքական կարգաւորումը ինչպէս հնարաւորութիւն բերող հեռանկար է, այդպէս էլ ռիսքեր ու վտանգներ առաջ բերող, ինչպէս գործնականում ցանկացած այլօրինակ մեծ ու բարդ աշխարհաքաղաքական խնդիր: Ըստ այդմ, Հայաստանին անհրաժեշտ է քաղաքական մտքի մոպիլիզացիա, հնարաւորութեան եւ ռիսքերի յարաբերակցութիւնը առաւելագոյնս հնարաւորութեան օգտին փոխելու համար: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Շաբ.ը էջ 6

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

«Քաղաքացիական Պայմանագիր»-ը Պիտի Չդիմե ՍԴ՝ Ընդդիմադիր Պատգամաւորները Մանտաթեմ Զրկելու Հարցով

Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինեան լրագրողներուն հետ ճեպագրուցին տեղեկացուցած է, որ ընդդիմադիր պատգամաւորները մանտաթեմ զրկելու հարցով «Քաղաքացիական Պայմանագիր»-ը պիտի չդիմէ Սահմանադրական Դատարան:

Ռուբինեանը նաեւ մանրամասնած է, թէ ինչու նման որոշում կայացուցած են: Որպէս առաջին պատճառ մատնանշած է ժողովուրդին կողմէ ընդդիմադիրներուն տրուած քուէին նկատմամբ ունեցած յարգանքը:

«Երկրորդ, մենք կարծում ենք, որ մեր երկրին հիմա պէտք է քաղաքական կայունութիւն եւ համերաշխութիւն: Եւ, վերջինը, եթէ ընդդիմութիւնը կարծում էր, թէ մենք պէտք է դիմէինք ՍԴ եւ իրենց՝ Ազգային ժողովից փախուստի փրկողակ նետէինք, սխալուում են:

Նրանք պէտք է գլուխները կախ գան ԱԺ, նայեն մեր աչքերի մէջ եւ չկարողանան կրկնել այն,



Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինեան

ինչն ասել են այս ամիսներին փողոցներում, եւ ոչ միայն փողոցներում, մենք էլ պէտք է նայենք իրենց աչքերին եւ ասենք այն ամէնը, ինչն ուզեցել ենք ասել, ուզում ենք ասել, եւ ասելու ենք», ըսած է Ռուբինեան:

Արտադրիչ Արմէն Գրիգորեան Յանկարծամահ Եղած Է Դատարանի Դահլիճին Մէջ

Դատական նիստի ընթացքին «Ուրախներու եւ հնարամիտներու ակումբ»-ի նախկին անդամ, արտադրիչ Արմէն Գրիգորեան ուշագնաց եղած է: Դատարանի դահլիճին մէջ գտնուող կարգադրիչներն ու նիստի մասնակիցները փորձած են անոր առաջին օգնութիւն ցոյց տալ:

Տեղ հասած շտապօգնութեան աշխատակիցները հաստատած են, որ Գրիգորեան յանկարծամահ եղած է, կ'ըսէ շտապօգնութեան տնօրէն Թագուհի Ստեփանեանը:

Թէ ի՞նչը եղած է Գրիգորեանի մահուան պատճառը, դեռ յայտնի չէ: Ըստ Թագուհի Ստեփանեանի՝ այդ դատաբժշկական քննութիւնը կրնայ պարզել:

«Դա արդէն դատաբժշկական քննութիւնը, փորձագէտները երբ որ կատարեն, իրենք յստակ կ'ասեն պատճառը: Միայն կարող ենք մտածել, բայց դա ճիշդ չէ, պէտք է անպայման մասնագէտն ասի՝ ինչն է խնդիր եղել, որ յանկարծամահութիւն է տեղի ունեցել», նշեց ան:

Արդեօք Գրիգորեանը առողջական խնդիրներ ունեցած է, թէ ոչ, անոր փաստաբաններէն կարելի չէ եղած պարզել, անոնք մերժած են մեկնաբանել:

Դատարանը պիտի քննէր Ամէն Գրիգորեանի կալանքի փոփոխման հարցը: Ան շուրջ երկու ամիս է կալանաւորուած էր:

Գրիգորեանը մեղադրեալ էր ազգային արժանապատուութիւնը հրապարակաջնջող նուաստացնելու դէպքի առիթով յարուցուած քրէական գործով:

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը աւելի վաղ տեսանիւթ հրատարակած էր՝ պնդելով, որ Գրիգորեանը հրապարակաջնջող նուաստացուցած է Շիրակի եւ Արարատեան դաշտի բնակչութեան ազգային արժանապատուութիւնը: «Հայելի» Ակումբէն ներս իր ունեցած ելուցի ընթացքին ան մեկնաբանելով կուսի մէջ ընդդիմութեան հանրահաւաքին



Արմէն Գրիգորեան

ժողովուրդի բացասական կեցուածքը ըսած էր որ, Շիրակի եւ Արարատեան դաշտի բնակչութեան մեծ մասը թուրքի «որբեր» են: Այս յայտարարութիւնը մեծ գոհութիւն յառաջացուցած էր ժողովուրդին մօտ:

Գրիգորեանի մահուան դէպքին անդրադարձած է Մարութ իրաւունքներու պաշտպանը: Քրիսթինէ Գրիգորեանը գրած է. «Մայրացեղ անընդունելի եւ մտահոգիչ է, որ նախնական կալանքի պայմաններում անձի նկատմամբ պահման վայրում չի երաշխաւորուում առողջութեան պահպանման իրաւունքը, պատշաճ չեն բացայայտուում եւ հասցեագրուում առողջական խնդիրները, ինչը յանգեցնում է նման ողբերգական հետեւանքի»:

Պաշտպանը նաեւ յայտնած է, որ պարզաբանումներ պահանջած է Դատախազութեանն եւ Արդարադատութեան Նախարարութեանն Արմէն Գրիգորեանի մօտ ախտորոշուած հիւանդութիւններու, անոնց բուժման նպատակով ձեռնարկուած միջոցներուն եւ մահուան յանգեցուցած միւս հնարաւոր հանգամանքներուն վերաբերելով:

«Հետեւողական եմ լինելու մեղաւորներին պատասխանատուութեան կանչելու հարցում», ըսած է ան:

Դատախազութիւնը Տարօն Մարգարեանի Եւ Գեորգ Կոստանեանի Ունեցուածքին Որոշակի Մասը Ապօրինի Որակած Է



Երեւանի Գախկին քաղաքապետ՝ Տարօն Մարգարեան

Գլխաւոր Դատախազութիւնը ծանուցագրեր ուղարկած է Երեւանի նախկին քաղաքապետին ու Հայաստանի նախկին գլխաւոր դատախազին՝ տեղեկացնելով, որ իրենց ու իրենց հարազատներուն պատկանող գոյքի ծագման օրինակաւորութիւնը ուսումնասիրած են, կազմած են ամփոփագրերը դատախազութիւնը անոնց ունեցուածքին որոշակի մասը որակած է ապօրինի:

Տարօն Մարգարեանն ու հետախուզման մէջ գտնուող Գեորգ Կոստանեանը անձամբ կամ ներկայացուցիչներու միջոցով պէտք է ծանօթանան այդ ուսումնասիրութիւններուն, որմէ յետոյ որոշեն՝ համաձայն են անոնց հետ, թէ ոչ: Եթէ համաձայն են եզրակացութիւններուն, օրէնքով հնարաւորութիւն ունին առանց դատարանի որոշման ապօրինի որակուած գոյքի ու եկամուտներու առնուազն 75 տոկոսը տալ պետութեան: Հակառակ պարագային, Դատախազութիւնը պիտի դիմէ դատարան, դատարանն ալ կ'որոշէ՝ նախկին իշխանութեան ներկայացուցիչներէն բռնագանձել անոնց ունեցուածքը, թէ ոչ:

Նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարեանի որդին 23 տարեկանէն զբաղեցուցած է տարբեր պետական պաշտօններ եւ իրաւապահները ուշադրութեան կեդրոնին յայտնուելու է 2018-ի չեղա-



Հայաստանի Գախկին գլխաւոր դատախազ՝ Գեորգ Կոստանեան

փոխութեանն յետոյ:

Երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի առաջնորդած Հանրապետական կուսակցութեան Գերագոյն Մարմինի անդամը Երեւանը ղեկավարած է 7 տարի: Յեղափոխութեանն յետոյ Տարօն Մարգարեանին մեղադրանք առաջադրեցին պաշտօնէական լիազօրութիւններու չարաշահման համար:

Ըստ Քննչական կոմիտէին՝ քաղաքապետի առաջին տեղակալի պաշտօնը զբաղեցնելով Մարգարեանը, պաշտօնէական լիազօրութիւնները չարաշահելով, դպրոցներու եւ մանկապատեզներու մէջ տարածքներ օտարած է:

Ըստ գործի տուեալներուն, Տարօն Մարգարեանը քաղաքապետարանի պաշտօնեաներուն եւ աշխատակիցներուն յանձնարարած է թողարկել դպրոցներու հողատարածքներու նոր յատակագիծեր՝ գանոնք փոքրացնելով, իսկ առանձնացուած տարածքները օտարուած են իր մերձակորներուն՝ շուկայականէն ցած գինով:

Տարօն Մարգարեանը մեղադրանքը չ'ընդունիր, անոր հետ մեղադրեալի աթոռին է կուսակցական ընկեր Գալուստ Սահակեանի որդին՝ Արման Սահակեանը, որ այդ ժամանակ զբաղեցուցած է կառավարութեան առընթեր Պետական գոյքի կառավարման վարչութեան պետի պաշտօնը:

ԱԱԾ-ն Արգիլած Է Մուրատ Փափագեանի Մուտքը Հայաստան

Ֆրանսայի Հայկական Ընկերութիւնները Համակարգող Նորհուրդի Համանախագահ, ՀՅԴ Բիւրոյի անդամ Մուրատ Փափագեանի մուտքը Հայաստան արգիլուած է:

Այս մասին թէեւ պաշտօնական բացատրութիւն չի տրուիր, սակայն կը կարծուի թէ որոշումը կապուած է Հայաստանի իշխանութեան ներկայացուցիչներուն դէմ անոր ծաւալած գործունէութեան հետ:

Մէկ տարի առաջ վարչապետ Փաշինեանի գլխաւորութեամբ Ֆրանսա կատարած այցի ժամանակ Փափագեանի համակարգմամբ դաշնակցական երիտասարդները Փարիզի մէջ խուլիկանական յարձակում կազմակերպել Փաշինեանին ուղեկցող շարասիւնին վրայ՝ իրեր նետելով եւ վնասելով ինքնաշարժներուն: Յիշեալ այցին ժամանակ Փափագեանի ղեկավարմամբ ամէն ինչ կատարուած է՝ տապալելու



Մուրատ Փափագեան

պաշտօնական հանդիպումները, եւ ստեղծելու տպաւորութիւն, որ Ֆրանսայի Հայկական համայնքը չէ ընդունած Փաշինեանի պատուիրակութիւնը:

ԼՈՒՐԵՐ

Իրան Դեմ Պիտի Ըլլայ Հայաստանի Հետ Իր Սահմանի Արգելափակման Քաղաքականութեան. Այաթոլլա Ալի Խամենեյի



Իրանի հոգեւոր առաջնորդ՝ Այաթոլլա Ալի Խամենեյին եւ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան հանդիպումի ընթացքին

Իրանի իսլամական Հանրապետութեան հոգեւոր առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենեյին Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի հետ Թեհրանի մէջ տեղի ունեցած հանդիպման ժամանակ յայտնած է, որ Իրանի իսլամական Հանրապետութիւնը դէմ պիտի ըլլայ Իրանի եւ Հայաստանի միջեւ սահմանի արգելափակման քաղաքականութեան:

պիտի գայ նման որոշման, քանի որ այս սահմանը հազարամեակներու վաղեմութիւն ունեցող հաղորդակցութեան ճանապարհ է», ըսաւ ան: Թուրքիոյ նախագահին եւ Իրանի հոգեւոր առաջնորդի հանդիպման ընթացքին անդրադարձ կատարած է նաեւ «Ալ ժազիրա»-ն՝ նշելով, որ Խամենեյին եւ Էրտողանի անդրադարձած են 2020 թուականի 44-օրեայ պատերազմին, որուն ժամանակ Թուրքիան Ատրպէյճանին ցուցաբերած է, ինչպէս ռազմական, այնպէս ալ քաղաքական աջակցութիւն:

ԱՄՆ Աշխոյժ Դեր Կը Խաղայ Երեւանի Եւ Պարսի Յարաբերութիւններու Կարգաւորման Հարցով. Փրայս

ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակ Նետ Փրայս պատասխանած է Երեւանի եւ Պարսի յարաբերութիւններու կարգաւորման հարցով ԱՄՆ դերին մասին հարցումին: «Մենք մշտապէս յայտարարած ենք, որ պատրաստ ենք փոխգործակցելու երկկողմ հիման վրայ եւ գործընկերներու հետ, այդ շարքին՝ ԵԱՀԿ Մինսքի Խումբի համանախագահի մեր դերով, որպէսզի օգնենք երկիրներուն հասնիլ երկարաժամկէտ եւ համապարփակ խաղաղութեան»:



Պետական Քարտուղարութեան խօսնակ՝ Նետ Փրայս


սութիւնը խաղաղ, դեմոկրատական եւ բարգաւաճ ապագայի հասնելու լաւագոյն միջոցն է Հարաւային Կովկասի տարածաշրջանին համար, եւ մենք պիտի շարունակենք աջակցիլ անոր հնարաւոր բոլոր ձեւերով», ըսած է ան:

Երկու Ուշագրաւ Այցելութիւն

արտաքին հետախուզական ծառայութեան հարցով: Ան խոստացաւ պաշտպանել Հայաստանը, առանց յստակացնելու թէ ինչպէ՞ս: Սերկէյ Նարիշքին պատասխանելով այն հարցին թէ արդե՞ք իր այցելութիւնը կապուած է Ամերիկացի պաշտօնակիցի այցելութեան հետ, ան հարցին պատասխանեց այլ հարցով, որ Ուիլիըմ Պրոնզի

այցելութիւնը արդե՞ք կապուած էր իմ այս այցելութեան հետ: Մեծ հաւանականութեամբ Սերկէյ Նարիշքին արագօրէն ժամանց Երեւան իմաստալու համար Ուիլիըմ Պրոնզի եւ վարչապետ Փաշինեանի միջեւ կայացած խօսակցութեան բովանդակութիւնը: Այս երկու այցելութիւնները անգամ մը եւս ցոյց կու տան Հայաստանի ներկայացուցած կարելորութիւնը՝ կովկասեան տարա-

Պայրամովի Հետ Հանդիպման Ընթացքին Սիրգոյեան Շեշտած Է Ռազմագերիներու Վերադարձին Կարելորութիւնը



Արարատ Սիրգոյեան եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճեյխուն Պայրամով Թիֆլիսի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Յուլիս 16-ին Թիֆլիսի մէջ վրաստանի արտաքին գործերու նախարար Իլեա Տարչիաշվիլիի հիւրընկալութեամբ տեղի ունեցած է Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Սիրգոյեանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճեյխուն Պայրամովի հանդիպումը: Հանդիպման ընթացքին Արարատ Սիրգոյեանն ու Ճեյխուն Պայրամովը անդրադարձած են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման առնչուող հարցերու լայն շրջանակի: Կողմերը քննարկած են այս առումով նախապէս ստանձնած պարտաւորութիւններու կատարման ընթացքը եւ միտքեր փոխանակած են հետագայ հնարաւոր քայլերու շուրջ: Նախարար Սիրգոյեան վերահաստատած է հայկական կողմին

տեսակէտը առ այն, որ տարածաշրջանին մէջ կայուն եւ տեւական խաղաղութեան հասնելու ճանապարհին կարելոր է Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան քաղաքական կարգաւորումը, եւ այս ծիրին մէջ ընդգծած է ԵԱՀԿ Մինսքի Խումբի համանախագահութեան եւ անոր փորձի օգտագործման կարելորութիւնը՝ իր միջազգային մասնաթիւն համապատասխան: ՀՀ արտաքին գործերու նախարարը շեշտած է մարդասիրական խնդիրներու, այդ շարքին՝ հայ ռազմագերիներու ազատ արձակման ու հայրենադարձման եւ անհետ կորսուած անձերու ճակատագրերու պարզաբանման խնդիրներու հասցէագրման կարելորութիւնը: Արձանագրուած է շփումները շարունակելու կողմերուն պատրաստակամութիւնը:

ԱՄՆ Եւ Ռուսաստան Կ'աջակցին Հայաստան-Թուրքիա Յարաբերութիւններու Կարգաւորում

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութիւնը աջակցութիւն յայտնած է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին: ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը պատասխանած է Հայաստանի եւ Թուրքիոյ ղեկավարներու հեռախօսազրոյցին եւ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած երկխօսութեան վերաբերեալ «Ամերիկայի Ձայն»-ի հարցին: «Միացեալ Նահանգները վճռականօրէն կ'աջակցին հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման, որը դրականօրէն պիտի անդրադառնայ ամբողջ տարածաշրջանին վրայ: Հայ-թրքական երկխօսութիւնը ներուժ ունի մեծցնելու տարածաշրջանային կայունութիւնը, զսպելու վնասակար ազդեցութիւնը եւ յանգեցնելու աւելի մեծ տնտեսական զարգացման, որ շահակէտ է բոլորին համար», ըսուած է ԱՄՆ Պետական Քարտուղարութեան արձագանգին մէջ: Պետական Քարտուղարութիւնը ընդգծած է, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ երկխօսութիւնը յատկապէս կարելոր է այսօր՝ հաշուի առնելով Ուքրանիոյ

մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները: Պետական Քարտուղարութիւնը յաւելած է, որ Միացեալ Նահանգները պատրաստակամ է աջակցելու այս կարելոր երկխօսութեան այնպէս, ինչպէս երկու կողմերը կը համարեն պատշաճ: Ռուսիոյ Դաշնութեան Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնակիցներու ներկայացուցիչ Մարիա Չախարովան եւս հանդէս եկած է նման յայտարարութեամբ: «Ռուսիան անփոփոխ կերպով կ'աջակցին Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին, որ սկսած է Յունուար 14-ին Մոսկուայի մէջ՝ Ռուսիոյ միջնորդութեամբ», ըսած է Չախարովան: «Մենք պատրաստ ենք հետագային եւս ամէն կերպ աջակցելու հայ-թրքական երկխօսութեան՝ մեկնելով անկէ, որ այդ կը բխի տարածաշրջանի կայունութեան եւ տնտեսական բարգաւաճման շահերէն», նշած է Չախարովան՝ եւս մէկ անգամ չի շեշտելով, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած ռուսական կողմին ջանքերը երկար տարիներու պատմութիւն ունին:

ծառայանքներ, նոյն ատեն փաստելով թէ Երեւան կը կարողանայ վարել բազմաբեւեռ յաջող արտաքին քաղաքականութիւն: Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

ՀՀ Կառավարութիւնը Պիտի Աջակցի Իրաքեան Քիւրտիստանի Մէջ Դժուար Կացութեան Մէջ Յայտնուած Հայերուն Եւ Այլ Ազգերուն



ՀՀ կառավարութիւնը աջակցութիւն պիտի տրամադրէ ճգնաժամով պայմանաւորուած իրաքեան Քիւրտիստանի տարբեր բնակավայրեր տեղափոխուած հայերուն, ճամբարներու մէջ բնակող եզտի փախստականներուն, ներքին տեղահանութեան ենթարկուած քիւրտներուն եւ ասորիներին: Նախագիծը ներառուած էր կառավարութեան նիստի չգեկուցուող հարցերու օրակարգին մէջ:

Հիմնադրման մէջ կը նշուի, որ ճգնաժամային իրավիճակներու պատճառով իրաքի կեդրոնական եւ հարաւային շրջաններէն, ինչպէս նաեւ Սուրիայէն իրաքեան Քիւրտիստանի տարբեր բնակավայրեր տեղափոխուած հայերու շրջանակին մէջ կան կենցաղային ծանր պայմաններու մէջ յայտնուած հայեր, որոնք մարդասիրական աջակցութեան կարիք ունին: Նման հայ ընտանիքներու թիւը, ըստ իրաքեան Քիւրտիստանի հայ համայնքային կառույցներու տրամադրած տուեալներուն, շուրջ 250 է:

Տեղական իշխանութիւնները, իրաքի Հայոց Առաջնորդարանը, ինչպէս նաեւ միջազգային մարդասիրական կազմակերպութիւնները անոնց պարբերաբար մարդասիրական օգնութիւն կը տրամադրեն, որ, սակայն, բաւարար չէ անոնց բնականոն կենցաղը ապահովելու համար: Մշտապէս առկայ է սնունդի, դեղորայքի, տաք հագուստի եւ այլ առաջին անհրաժեշտութեան պարագաներու կարիք:

Հայերէն գատ՝ ծանր կենցա-

ղային պայմաններու մէջ յայտնուած են նաեւ իրաքեան Քիւրտիստանի ճամբարներուն մէջ բնակող եզտի փախստականները, ներքին տեղահանութեան ենթարկուած քիւրտները եւ ասորիները:

Նախագիծով կ'առաջարկուի էրպիլի մէջ ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան յատկացնել 80 հազար տոլար: Հաշուետուողականութեան եւ թափանցիկութեան ապահովման նպատակով Գլխաւոր հիւպատոսութիւնը պիտի ձեւաւորէ յանձնարարութեան օգնութեան շահառուներու ցուցակներու յատկացման, պահանջուող ապրանքներու գնման, այնուհետեւ օգնութեան բաշխման աշխատանքները իրականացնելու նպատակով:

Յանձնարարութեան մէջ պիտի ներառուին հայ համայնքի ղեկավարութեան անդամներ: Շուրջ 250 հայ ընտանիքներու, այսինքն՝ մօտ 1000 հոգիի, պիտի տրամադրուին առաջին անհրաժեշտութեան ապահովման ապրանքներ՝ սննդամթերք, անձնական մաքրութեան պարագաներ, դեղորայք եւ այլն, իւրաքանչիւր անձին շուրջ 100 տոլարի հաշուարկով: Ինչ կը վերաբերի ընդհանուր գումարի մնացորդին, որ պիտի կազմէ մօտ 30000 տոլար, ապա այն պիտի յատկացուի տարբեր ճամբարներու մէջ բնակող եզտի եւ այլ փոքրամասնութիւններու փախստականներու համար տաքցուցիչներ եւ ծածկոցներ ձեռք բերելու համար՝ տեղական իշխանութիւններու հետ համագործակցաբար:

Հայաստանը Դուրս Կը Հանէ Իր Զօրքերը

Շարունակուած էջ 1-էն

քարտուղարը պնդած է, որ անվտանգութեան առումով ոչինչ պիտի փոխուի Արցախի մէջ, որովհետեւ այնտեղ նախապէս ալ անվտանգութեան ապահովման գործը եղած է Պաշտպանութեան բանակի ուսերուն: Ապա յաւելած է, որ Լեւոնային Ղարաբաղին մէջ Ռուսիոյ Դաշնութեան խաղաղապահ ուժերու տեղակայումը անվտանգութեան երաշխիք պիտի ըլլայ:

Դիտարկմանը, թէ Մարտին ռուս խաղաղապահներու ներկայութեամբ ատրպէյճանական ուժերու յառաջխաղացումը Փառուխի ուղղութեամբ ցոյց տուած, որ այդ այդպէս չէ, պաշտօնեան արձագանգած է. «Փառուխի դէպքերը 2020 թուականի Նոյեմբերի 9-ի յայտարարութեան կոպիտ խախտում են: Ռուսաստանի Դաշնութիւնը մեզ

հաւաստիացրել է, որ ներխուժած ատրպէյճանական ուժերը պէտք է դուրս գան այնտեղից, եւ մենք յոյս ունենք, որ խաղաղապահ ուժերը կ'ապահովեն ապօրինի ներխուժած ստորաբաժանումների դուրսբերումը խաղաղապահ ուժերի պատասխանատուութեան գոտուց»:

Արմէն Գրիգորեանի՝ Ղարաբաղի զօրակոչի թեմայով հարցազրոյցը կը յաջորդէ անցեալ շաբթուան վերջը Ատրպէյճանի նախագահի ծաւալուն ելոյթին, ուր ան յայտարարած էր, որ 44-օրեայ պատերազմէն աւելի քան 1.5 տարի անց Հայաստանը դեռ չէ կատարած ստանձնած պարտաւորութիւնները, մինչդեռ Ռուսիոյ Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչը Պաքուի մէջ խոստացած էր, որ հայկական զօրքերը մինչեւ Յունիս դուրս պիտի բերուին Ղարաբաղէն:

Երեւանի «Ոսկէ Ծիրան» Շարժանկարի Միջազգային Փառատօնը Եզրափակուեցաւ Ծրագիրն Ընդգրկած Էր Շուրջ 100 Ֆիլմ

Երեւանի «Ոսկէ Ծիրան» շարժանկարի միջազգային փառատօնն հասաւ իր աւարտին, Կիրակի 17 Յունիսին: Այս առթիւ «Արամ Խաչատուրեան» համերգասրահին մէջ տեղի ունեցաւ փակման հանդիսաւոր արարողութիւնը: Հրապարակուեցան անունները այն ժապաւէններուն, որոնք այս տարի մրցանակի արժանացած էին գանազան անուանակարգերուն մէջ:

Լաւագոյն ժապաւէնի ոսկեայ ծիրանի տիտղոսակիր դարձաւ Լի ժուռուի «Հող էիր՝ հող դարձար» ժապաւէնը: Արծաթեայ ծիրան ստացաւ Իննա Սահակեանի «Աւրորայի Լուսաբացը» գծիկով ժապաւէնը: Իսկ յատուկ յիշատակի արժանացաւ Սիրիլ Շէյպլինի «Խմորում»:

Նշենք նաեւ որ մրցանակաբաշխութեան նախագահն էր օսգարակիր բեմադրիչ Թերի ձորձը: Ան՝ մրցանակները յանձնելու ընթացքին, շնորհակալութիւն յայտնեց փառատօնի հիմնադիրներուն, դատակազմի անդամներուն, «Ոսկէ Ծիրան» փառատօնն ու Երեւանը բնորոշելով որպէս կախարդիչ իրականութիւններ:

Փառատօնի գեղարուեստական սնորհն Կարէն Աւետիսեան ելոյթ ունենալով, նշեց որ երկար կրնային խօսիլ փառատօնի մասին եւ անդրադառնալ աւելի քան 150 հիւրերուն, բայց իրենց համար էական է այն փաստը, որ փառատօնը մշակութային դարպասի վերածուած է, տարուան մէջ կը բացուի ընդամէնը 7 օր եւ իրենց էգրաններու ընդմէջէն, ներս կը հրաւիրեն ամբողջ աշխարհը, այն հրաշալի հիւրերը, որոնք ներս կը մտնեն այդ դռնէն: Դռները փակելէ առաջ, մենք այդ դարպասի բանալին կը փորձենք յանձնել բոլոր մանակիցներուն: Դիտել տուաւ Աւետիսեան:

«Փեթր Ֆան Պիւրէնի անուան տարածաշրջանային համայնապատկեր» մրցոյթի դափնեկիրը հանդիսացաւ Քուրտուհի Այուպի «Արեւ»ը: FIBERESCI մրցանակը շնորհուեցաւ Մահմուտ Ղաֆֆարիի

«Խնձորի Օրը» գործը: «Կորիզ» կարճամեկէտ ժապաւէններու մրցոյթի առաջինը դասուեցաւ Մուհամմէտ Ռեզա Ֆարգաի «Ենթագոյններ»ը: «Կենտրոնի Մեղիքներ»ը ստացաւ Համբարձում Համբարձումեանի «Քորէական Տելիքաթեա»ը: «Խոստում լաւագոյն մարդասիրական ֆիլմ» անուանեալ մրցանակը տրուեցաւ Սիմոն Լեբենկ Վիլմոնտի «Բեկորներէն հաւաքուած տուն»ը ժապաւէնին:

Իր սրտի խօսքն արտասանեց նաեւ փառատօնի հիմնադիր Յարութիւն Խաչատրեան: Մրցանակաշաբուրթեան արարողութեան յաջորդեց Կարին Յովհաննիսեանի «Չտեսնուած Հանրապետութիւն» շարժանկարի ցուցադրութիւնը: Ըստ բեմագրութեան երբ 2020-ի Սեպտեմբերին պատերազմ կը սկսի, գրող եւ լուսանկարիչ Լիկա Չաքարեան ապաստան մը կը գտնէ եւ կը սկսի գրել: Ան դեռ չէր գիտեր որ իր օրագրութիւնը պիտի դառնայ Արցախեան 44 օրուան պատերազմի ամբողջական ու բազմաշերտ պատմագրութիւն մը:

Հարկ է նշել որ այս տարուան «Ոսկէ Ծիրան»ի շրջանակին մէջ, ցուցադրուեցաւ շուրջ 100 ժապաւէն: Յատկապէս այս փառատօնին մասնակցեալ համար Երեւան այցելեցին համաշխարհային շարժանկարի կարգ մը հեղինակաւոր անուններ. օրինակ՝ սպանացի բեմադրիչ Ալպրէթ Սերա, Քաննի փառատօնի կրկնակի մրցանակակիր, ժապաւէններու արտադրիչ Ֆիլիպ Պոպլեր, DAU բազմահարթակ մարդաբանական շարժանկարի նախագիծի հեղինակ Իլիա Խորթոնովսքի եւ ուրիշներ:

Նշենք նաեւ որ 19-րդ անգամ կազմակերպուած եւ Յունիսի 10-ին սկիզբ առած սոյն «Ոսկէ Ծիրան» փառատօնը հովանաւորուած էր Երեւանի քաղաքապետարանին կողմէ, որուն աջակցած էր նաեւ Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ մարմնամարզութեան նախարարութիւնը:

Գաղտնի Սպասարկութիւններուն Դեկավարներ

Շարունակուած էջ 1-էն

միջազգային եւ տարածաշրջանային անվտանգութեան վերաբերող հարցեր: Անդրադարձած են Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ տեղի ունեցող գործընթացներուն:

Հանդիպման ընթացքին Նիկոլ Փաշինեան նշած է, որ պարոն Նարիշքինի այցը եւս մէկ լաւ հնարաւորութիւն է քննարկելու հայ-ռուսական դաշնակցային յարաբերութիւններու օրակարգային հարցերը:

Ընդգծելով, որ այս տարի կը

«Հայաստանը՝ որպէս պատերազմը պարտուած կողմ, պարտաւորութիւններ ստանձնած է, որոնք յստակ ամբարձրուած են Նոյեմբերի 10-ի յայտարարութեամբ: Անոնցմէ մէկը հայկական զինուած ուժե-

նշուի երկու երկիրներուն միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեայ չորեքեանը, վարչապետը վստահութիւն յայտնած է, որ համատեղ ջանքերով պիտի յաջողին փոխգործակցութիւնը դարձնել առաւել արդիւնաւէտ ու ամուր:

Սերկէյ Նարիշքին նշած է Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ առկայ բարձր մակարդակի քաղաքական երկխօսութեան փաստը, ինչ որ կը նպաստէ տարբեր ոլորտներու մէջ համագործակցութեան զարգացման ու ամրապնդման:

րու դուրսբերումն է Ղարաբաղէն: Սակայն մինչ օրս այդ չէ իրագործուած: Մենք բազմիցս բարձրացուցած ենք այս հարցը, սակայն Հայաստանը կը ձգձգէ», ըսած էր Ալիեւ:

Մեր Ազգային Ցանկալի Վերածնունդը

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԻԹԵԱՆ

Հաւատացեալներու աշխարհին մէջ վերածնունդ (born again) կը կոչեն մարդու «հոգեմաքրութեան» ուղիով քալելու երեւոյթը: Աշխարհական կեանքի ժխտըն դուրս ճանապարհ ընտրող մարդիկ կը նետուին Աստուծոյ գիրկը՝ հոգեկան հանդարտութիւն փնտռելու տենչով, եւ իրենց մարգարէն կը դարձնեն ամէնօրեայ ընկեր՝ անոր մտքին ու խորհուրդին աշակերտը դառնալով: Այդ տեսակ մարդիկ կը թուին ըլլալ գոհ եւ երջանիկ, որովհետեւ Աստուծոյ օգտաշատ ձեռքը կը տեսնեն այն ամէն ինչին մէջ, որ կը տնօրինէ իրենց բարւոք երթը կեանքի մէջ: Անոնք իրենց շրջապատին վնաս չեն պատճառուեր:

Հաւատացեալներու աշխարհին դուրս կան նաեւ մարդիկ, որոնք ուրիշին օգտակար դառնալու եւ անոր կեանքը բարելաւելու համար կը գինուորագրուին վեհ գաղափարի մը կամ նպատակի մը եւ իրենց աստուածը կ'ընտրեն ազգի մը փրկութեան եւ կամ մարդկութեան բարւոքութեան առաջնորդի կերպարով: Այդպիսիներն ալ իրենց շուրջիններուն կեանքը բարելաւելու կը ծառայեն: Եւ կան անշուշտ մեծ թիւով հեզ ու բարի մարդիկ, որոնք իրենց բնագոյնի նկարագրով գիտեն զանազանել զէջը լաւն եւ ճիշդը սխալն:

Այս խումբերէն դուրս կան ամեղովներ, պնակալիցներ ու դաւաճաններ, որոնք իրենց սեփական շահուն եւ աղտոտ նկարագրին պատճառաւ «հոգեմաքրութեան» կը կարօտին, սակայն սխալ ճամբով քալելով՝ կ'արատաւորեն իրենց շրջապատը եւ մեծ վնաս կը պատճառեն իրենց ազգին, հայրենիքին ու «մարդկային» կոչուող արժանիքներուն:

Վերոյիշեալ խորհրդածութեամբ տարուեցանք՝ վերջերս կարգալով հայրենիքէն հասած լուրերը, որոնք կը խօսէին հայկական բանակի բարձրաստիճան սպաներու եւ շարքայիններու ձեռքակալութիւններուն մասին:

Մեր ազգային պատմութիւնը դժբախտաբար լեցուն է ուրիշին ծառայող լրտեսներու եւ դաւաճաններու դէպքերով: Մեր մէջ յաճախ գտնուած են մարդիկ, որոնք թշնամիին հետ գործակցելու տրամադրութեամբ վնաս հասցուցած են մեր ժողովուրդի շահերուն ու յաղթանակներուն: Չափազանցութիւն պիտի չըլլար ըսել, թէ մեր լեռնականներու քաջ ազգը, -որ ժամանակին սարսափն էր հոռոմէացի զօրավարներուն եւ մեր երկիրը արշաւող միւս բոլոր բանակներուն,- կրնար իր հովանիին տակ առնել դրացի ժողովուրդները եւ հզօր կայսրութիւն կազմել, եթէ չըլլային այն դաւաճաններն ու լրտեսները, որոնք ազգ ու հայրենիք ծախու հանեցին՝ սեփական շահեր հետապնդելով:

Ազգային ազատագրական մեր պայքարի բոլոր փուլերուն, հայ գինուորն ու ֆետային հարկադրուած եղած են թրքաբարոյ մեր «եան-եան»ները մաքրագործելու, որպէս պատիժ ազգին ու հայրենիքին դաւաճանած հայանուն սմսեղուկներուն:

Վազգէն Սարգսեանի եւ Կարէն Դեմիրճեանի ազգային արգասաբեր ընթացքին վերջ դնող անիծեալ Յունանեաններու զնդակները

վերջ դրին այն յուսադրիչ երազներուն, որ մեր ազգն ու հայրենիքը ունէին արցախեան մեր յաղթանակը յաւերժացնելու համար: Եւ ունեցանք քսան տարիներու երկայնքին մարդիկ, որոնք խաբեցին մեզ բանակով մը, որ Պաքուն պիտի գրաւէր քանի մը օրէն, եթէ հարկ ըլլար...:

Ոստիկանութիւնը կ'որոշէ Պապ Ալիի շրջակայ փողոցները գիւնուորներով շրջապատել: Այդ պարագան նկատի առնելով՝ Հնչակեանները ռազմավարութեամբ մը ցոյցի օր կը փոխեն եւ փոխանակ Կիրակի, Երկուշաբթի օր, 4000 ի հասնող բազմութիւն մը կը խառնուի Գուժ Գաբու: Յուցարարներուն մեծամասնութիւնը կը բաղկանար մշեցի, վանեցի եւ բաղնիքի պանդուխտներէ. ասոնց կը միանան նաեւ պոլսեցիներ՝ գլխաւորաբար կիներ եւ աղջիկներ:

Յուցարարներու մէջէն չորս օրիորդներ կը ներկայանան Իզմիրլեան Պատրիարքին, որոնց մէջէն Մարի Պէլլեան յուզիչ ճառով մը կ'անդրադառնայ Հայութեան կրած տառապանքներուն եւ կը խնդրէ որ Պատրիարքը դիմէ Բ. Դուռն եւ եւրոպական պետութեանց՝ վերջ տալու համար անյուր հալածանքներուն եւ հարստահարութեանց: Մարի Պէլլեան ճառը կը վերջացնէ բացազանչելով. «Սրբազանն, ժողովուրդը ՄԱՀ կամ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ կը պահանջէ»:

Յուցարարները այնուհետեւ թափօր կազմած կը դիմեն դէպի

Պապ Ալի, հոն ներկայացնելու համար Հնչակեան Յուշագիր Պահանջագիրը: Ճամբու ընթացքին ուրիշ խումբեր ալ կը միանան. «Զայն մը հնչեց էրզրումի Հայոց լեռներէն» միասին երգելով կը շարժին դէպի պալատ:

Յուցարարները երբ կը մօտենան Բ. Դուռն երկաթեայ վանդակներուն՝

դռները կը գոցուին եւ ոստիկանները կ'արգիլեն ներս մտնել: Այն ատեն քանի մը հոգի կը մօտենան պահակներուն եւ կը բացատրեն թէ իրենք խնդրագիր մը ունին յանձնելու եւ կը խնդրեն թոյլ տրուի գէթ երկու հոգի ներս մուտք գործել: Այդ պահուն պալատական թիկնապահ մը կը հասնի ձիով եւ իր ձեռքին բռնած «Իրատէ» (հրամանագիրը) Պապ Ալիի հսկիչ հազարապետին յանձնելով կը տեղեկացնէ թէ՛ գարնելու հրամանն է:

Թիկնապահ Սարվէթ պէյ երբ այդ խօսքը կը կրկնէ, հոն գտնուող Աբրահամ անունով 18 տարեկան գաւառացի երիտասարդ մը, ատրճանակի հարուածով Սերվէթ պէյը ձիէն վար կը բերէ՝ մահը վայրկեանակէն կ'ըլլայ:

Ասոր վրայ կը սկսի կատարեալ կռիւ մը հայերու եւ ոստիկանութեան միջեւ: Դէպքին վայրը կը խուժեն իսլամ սոֆիները, միւս կողմէ Անտոն Ռշտունիի գլխաւորութեամբ՝ 500 հայ մարտիկներ կը հասնին եւ կռիւը ալ աւելի կը սաստկանայ:

Ալի քան մէկ ժամ Պոլիս, Բերա եւ Ղալաթա տակնուվրայ կ'ըլլան: Քիչ անց պատրիարքարան կը բերուի գրութիւն մը, որով կը հրաւիրէին Իզմիրլեանը որպէսզի համոզէ ժողովուրդը վերջ տալ ցոյցին:

Պապ Ալիէն վերադարձին ժողովուրդը փոխանակ տուն քաշուելու կը լեցուի Գուժ Գաբուի, Բերայի եւ Ղալաթայի եկեղեցիները եւ կը շարունակէ խաղաղ եւ անզէն ցոյցը: Իզմիրլեանը միշտ միեւնոյն պատասխանը կու տայ, թէ ինք անկարող է խօսք հասկցնել արդար գայրոյթով բորբոքած ամբոխին:

Խաղաղ ցոյցը յաջորդ օրն ալ կը շարունակուի: Եկեղեցիներուն մէջ խմբուած բազմութիւնը չուզեր քաշուիլ, մինչեւ որ դրական

երաշխիքներ չտրուին իրենց: Պատրիարքարանէն իր յոյսը կտրելով կառավարութիւնը կը դիմէ քանի մը հայ երեւելիներու, որպէսզի համոզեն ժողովուրդին եկեղեցիները պարպել: Անոնցմէ Նորատունկեան, Տաղաւարեան, Քելէկեան Խան կը շրջին եկեղեցիները եւ կը հաղորդեն կառավարութեան երաշխաւորութեան մասին, թէ՛ բարենորոգումներու եւ թէ՛ իրենց ապահովութեան վերաբերեալ: Ժողովուրդը կը քաշուի եկեղեցիներէն եւ խաղաղ նպատակով սկսած, բայց արիւնով աւարտած ցոյցը վերջ կը գտնէ:

ՊԱՊԸ ԱԼԻԻ ՅՈՅՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ

Հնչակեան կուսակցութեան կազմակերպած այս վիթխարի ցոյցը՝ լայն արձագանգ կը գտնէ միջազգային մամուլին ու քաղաքական աշխարհի մէջ: Եւրոպական մամուլը, հաղորդելէ ետք ցոյցին մանրամասնութիւնները, ընդարձակ խորհրդածութիւններ եւ մեկնաբանութիւններ կ'ընէ:

Պապ Ալիի ցոյցին առթիւ ընդարձակ յօդուածներ եւ թղթակցութիւններ կը հրատարակեն ֆրանսական եւ գերմանական թերթերը, որոնք նոյն տեսակէտը կը պաշտպանեն՝ նման ցոյցերը միակ միջոցը կը հանդիսանան Սուլթան Ապտիլ Համիտի վրայ ազդելու համար:

Քեամիլ փաշան պաշտօնի անցնելուն պէս, եւրոպական պետութեանց դեսպանները յուշագիր մը կը ներկայացնեն անոր, որ կը պարունակէր հետեւեալ կէտերը:

ա. Պապ Ալիի ցոյցին հետեւանքով բանտարկեալներուն ազատ արձակումը.

բ. Երաշխաւորել ժողովուրդի ապահովութիւնը՝ ջարդերու դէմ.

գ. Քննութիւն բանալ դէպքին մասին եւ պատժել հայեր կոտորողները.

դ. Վաւերացնել Հայաստանի մէջ մտցուելիք բարենորոգումներու ծրագիրները.

Յուշագրին ամէնէն ծանր կէտը Սուլթանին համար այս վերջինն էր: Տարիներէ ի վեր ան կը ձգձգէր բարենորոգումներու հարցը, որպէսզի պատեհ առիթով ալ հրաժարէր անկէ: Բայց այս անգամ դեսպանները ամուր կեցած էին եւ կը պահանջէին ամէն գնով վաւերացնել:

Վերջապէս 1895 Հոկտեմբեր 18-ին, հրամանագիրը պաշտօնապէս կը ստորագրուէր: Սուլթան Համիտ հարկադրուած կ'ըլլար Պապ Ալիի ցոյցէն հազիւ քանի մը շաբաթ ետք եւ անոր հետեւանքով ստորագրել բարենորոգումներու ծրագիրը: Պապ Ալիի ցոյցով Հնչակեան կուսակցութիւնը անգամ մը եւս ընդունիլ տուած էր Եւրոպային՝ Հայկական Դատին իրաւական հանգամանքը:

Այդ ցոյցով Ապտիլ Համիտ խոնարհած էր հայ յեղափոխութեան ուժին առջեւ:

Ցալի, Վշտի ու Սիրոյ Բանաստեղծ Գագիկ Կարապետեան (Ելոյթ՝ «Յոյգերի խաչմերուկ» Գրքի Շնորհանդէսում)

ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Գրել կարող է ամէն մի ան-
հատ, բայց նրանցից եզակիներն են
հասնում իսկական գրող-բանաս-
տեղծի մակարդակին: Նրանցից մէկն
է Գագիկ Կարապետեանը:

Շիրակի ծնունդ է Գագիկ
Կարապետեանը, որը գրական աշ-
խարհում հաստատեց իր տեղը ու
պայթող արկի նման, հռչակումով՝
ակնատեսի վկայութեամբ աշխար-
հի առջեւ բաց արեց 1988-ի
Լենինականի աշխարհակուլ երկ-
րաշարժի սահմակեցուցիչ համայ-
նապատկերը, որը, միանգամայն
իրաւացիօրէն հեղինակն անուանեց
«Դժոխք»:

Գագիկ Կարապետեանի
«Դժոխք» պոէմը շունդալից յաջո-
ղութիւն բերեց հեղինակին:

Պոէմի մասին ժամանակին հի-
ացական արտայայտութեամբ է հան-
դէս եկել հանճարեղ բանաստեղծու-
հի Սիլվա Կապուտիկեանը:

- Արարիչը նայեց վերից եւ
տեսաւ չկայ Շիրազը եւ որոշեց
գիւմրեցի Գագիկի ձեռքով ստեղ-
ծել այս հանճարեղ գործը՝ «Դժոխք»
պոէմը, - գրել է նա:

Ով սիրտ ու հոգի ունի,
«Դժոխք»ը չի կարող նրա հոգում
երկրաշարժ, հոգու, մտքի ալեկո-
ծում չ'առաջացնել:

Իզուր չի գրել շնորհառատ
բանաստեղծ Արամայիս Սահակեա-
նը.

- Այդ պոէմը նոր երկրաշարժ
առաջացրեց իմ հոգում՝ յոյգերի
երկրաշարժ, բայց ազնիւ երկրա-
շարժ: Գագիկ Կարապետեանի
«Դժոխք»ը դրախտ պոեզիան
պարգևեց ինձ:

Ես ինչո՞ւ իմ խօսքն սկսեցի
յատկապէս «Դժոխք» պոէմով: Լիու-
լի վերանայելով Գագիկ Կարա-
պետեանի «Յոյգերի խաչմերուկ»
ժողովածուն, տեսայ որ, պոէմի
շունչը, ազդեցութիւնը երեւում է
նրա գրեթէ բոլոր գործերում, լինի
չափածոյ, թէ արձակ: Թաքնուած
տիրութիւնն ու թախիծը գերիշ-
խող է շատ տեղերում:

«Դժոխք» պոէմը բանաստեղ-
ծի հոգեզաւակն է, իր խաչը, որ նա
կրել է, եւ կրելու է իր ողջ
գիտակցական կեանքում:

Գիւմրեցուն բնորոշ լիաթոք
խինդն ու ծիծաղը բացակայում է
բանաստեղծի՝ նոյնիսկ սիրոյն
նուիրուած բանաստեղծութիւննե-
րում, թէեւ ոմանց մէջ լոյս կայ,
յոյս կայ դրանց տողատակերում:
Բանաստեղծին մշտապէս «հետապն-
դում» են «Դժոխք»ն ու հոգեցունց
«Գուգոն» ողբերգական նովելը:
Գագիկ Կարապետեանի ամէն մի
գործի մէջ թախիծ ու կարօտ կայ,
եթէ ոչ բացայայտ, ապա անպայ-
մանօրէն թաքնուած: Անցեալի պատ-
կերները հանգիստ չեն տալիս նրան:
Անցեալի ցաւն ու վիշտը կոտորա-
ցող վէրքի նման՝ չեն սպիանում
նրա հոգում:

Զուր տեղը չէ, որ աննման
ասմունքով վերա Յակոբեանը հե-
տեւեալ տողերն է նուիրել Գագիկ
Կարապետեանին.

«Դժոխքի» բովում այրուեց հո-
գիդ,

Ու իջաւ հոգուտ խորունկ դառ-
նութիւն,
Կորցրի ճամբան լոյսի ու յոյսի
Մնաց կեղեքող մի յիշողութիւն:

Գիւմրեցուն բնորոշ լիաթոք
խինդն ու ծիծաղը բացակայում է



նոյնիսկ սիրուն նուիրուած բա-
նաստեղծութիւններում, թէեւ ոմանց
մէջ լոյս կայ, յոյս կայ սիրոյն
նուիրուած բանաստեղծութիւննե-
րի տողատակերում: Անցեալի պատ-
կերները հանգիստ չեն տալիս նրան:
Իր մասնագիտութեան բերումով,
որպէս համբաւաւոր, լաւագոյնս
ճանաչուած բժիշկ, նա, մարդկանց
մարմնական ցաւերն է բուժում,
սակայն Տիրոջ կողմից իրեն պար-
գեւած գրելու շնորհքը պարտաւոր
է ծառայեցնել նաեւ նրանց հոգե-
կան բուժմանը, ամոքելու համար
նրանց հոգում ամբարուած ցաւն ու
վիշտը, միեւնոյն ժամանակ յոյս
ներշնչելով լուսաւոր ապագայի
նկատմամբ: Նա պարտաւոր է ժա-
մանակ առ ժամանակ իր հուժկու,
ջլուտ ձեռքերին ու մատներին
հանգստութիւն տալ գրիչ բռնելով:

Գագիկ Կարապետեանի «Յոյ-
գերի խաչմերուկ» գրքի բանաս-
տեղծութիւնների բաժինը վեց են-
թավերնագրեր ունի: Առաջինի ան-
ուանումն է՝ ԽՈՂՆԵՐԳՈՒԹԻՒՆ:
Այս բաժնի բանաստեղծութիւննե-
րի հիմնական թեման կարօտն է,
ու՞րչ յաճախ՝ նաեւ հիասթափու-
թիւնը: Բանաստեղծն հիմնակա-
նում ամէն ինչ տեսնում է մթու-
թեան մէջ, խաւարում: Մուգ գոյ-
ները թագաւորում են ամէնուրեք:
Մէկ երկնքից ընկած ասուպն է
սիրտը կոտորում, մէկ ցաքուցրիւ
ձիւն է իջնում մագերին, ու, մէկ էլ՝
սիրտն է սառուց կապում աչքի
առջեւ բերելով Գուգոյի կնոջ
սառած մարմինը:

Մաղուում է ձիւնը դանդաղ
Յալուում օրերիս ցման,
Անվերադարձ կեանքն անցաւ,
Կորաւ հողմերի ցման
Ձմեռ է եւ Երեսուս իմ,
Սիրտս՝ սառուցի է ցման:

Այ՞ր կարօտ, կարօտներ՝ հենց
այդպէս՝ հոգնակի, կարծես աշ-
խարհի դարդ ու ցաւը իրեն են
տուել: ԿԱՐՕՏԸ իր յաւիտենական
ընկերն է դարձել: Բանաստեղծի
հոգին բանի նման չէ, այն «աւեր-
ուած անտառ է դարձել».

Իմ հոգին քամուց մոլեգին
Աւերուած անտառ է դարձել,
Այդ ցաւից ու վախից մոլագար
Սիրտս մեծ ճաքեր է տուել:

Մուսլ, թանձր խաւարում
խարխափող նրա ճաք տուած սիր-
տը կարող է փոքր ինչ հանդարտ-
ուել աչքերից հոսող արցունքի
ծովում.

Այժմ էլ սպիներն անճոռնի
Գամել եմ ինձ ճահճում անանց
Ինձ հնար էլ չկայ դուրս գալու
Դեռ ինչքա՞ն, ինչքա՞ն եմ լա-
լու:

Գագիկ Կարապետեանի բա-
նաստեղծութիւնների երկրորդ բաժ-

նի անուանումն է՝ ԴՈՒ ԱՌԱՆՅ
ԻՆՁ, ԵՍ՝ ԱՌԱՆՅ ՔԵՉ: Այստեղ
արդէն փոքր ինչ լաւատեսութիւն
կայ: Մէրն է մէջտեղ ելել, որին
պէտք է գուրգուրել, իսկական սէրը
բաժանումից՝ իրոք որ աւելի է
թէժանում:

Ես՝ առանց քեզ, դու՝ առանց ինձ
Բայց սեր իմ, սերը հեշտ չի
պարտուում

Սերն իսկական՝ բաժանումից
է՛լ աւելի է թէժանում:

Յաջորդ երկու բաժիններում
(ՍԻՐՈՅ ԳԱՐՈՒՆ, ՍԻՐՈՅ ԱՇՈՒՆ)
Մէրն է թեւածում գարնան եւ
աշնան գոյներով: Եթէ գարնանը
նոր սէր է ծնւում, ապա աշնանը
այն նորոգում է, թարմանում,
որպէսզի վաղիք գարնանը նորովի,
փթթի ու ծաղկի նոր սիրոյ հազա-
րագոյն ծաղիկներով: Կա՞յ մի բա-
նաստեղծ, որ մշտանորոգ սիրով
բոցավառուած, հրաշք տողեր չը
նուիրի իր սիրեցեալին: Առաջին
սէրն է մնայուն, մնացեալ սէրէրը,
ըստ Գագիկ Կարապետեանի երկ-
րաշարժ (ժաժք) են առաջացնում
մարդու հոգում ու նրան մղում
մաքուր, ազնիւ գործերի իրակա-
նացմանը: Յիշենք թէ՛ ինչ է սաել
Պարոյր Սեւակը սիրոյ մասին.

ՆՈՐԻՅ ՁԵՆ ՍԻՐՈՒՄ, ՍԻ-
ՐՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ:

Իրաւ բանաստեղծը չի կարող
չբոցավառուել ոչ մարմնային սէ-
րէրով: Մի գեղեցիկուհու հմայքով
տարուելը՝ ինքնին արդէն մի բա-
նաստեղծութիւն է: Ուրեմն պիտի
ընդունել, որ Մէրը Աստուծոյ կողմից
մեզ պարգևուած ամէնից հաճելի,
ամէնից երանելի հաճույքն է: Ըստ
արժանուցյն գնահատելով Գագիկ
Կարապետեանի՝ սիրոյն նուիրուած
բանաստեղծութիւնները, սփիւռքա-
հայ աւելի քան յայտնի արձակագիր
Ռուպէր Հատտէճեանը գրում է.

- Գագիկ Կարապետեանի բա-
նաստեղծութիւնները կը ջերմաց-
նեն մեր սիրտը, մեզի անգամ մը
եւս կը սիրեցնեն սէրը, մեզի կը
բացատրեն, թէ սիրոյ յաճախանքը
այն կրակն է, որ միշտ տաքուկ կը
պահէ հոգիին հնոցը:

Իսկ որքա՞ն սէրեր է տեսել ու
տեսնում մեր Գագիկը՝ մասնագի-
տութեան բերումով, որի շնորհիւ,
տարուէ-տարի նոր գոյն, նոր տեսք
է ստանում նրա սիրոյ ներկայւնա-
կը:

Սէ՛ր, սէ՛ր, սէ՛ր, - այդ կայ,
կա՞ միշտ, բայց դրա կողքին կայ
մարդկային վիշտ ու ցաւ: Բանաս-
տեղծի հոգին ու սիրտը խաղաղ
չեն, որովհետեւ իր շուրջը ամէն
ինչ մնայուն վիշտ է ու ցաւ:

Գիշերն աննկատ, գիշերը տխուր
Անցնում է, գնում

Ցաւը լցուել է իմ շուրջը նորից

Ու չի հեռանում:
Իսկ ո՞վ պիտի հեռացնի բա-
նաստեղծի շուրջը լցուած ցաւն ու
յիշողութիւնը՝ եթէ ոչ նրա մնայուն
առաջին սէրը՝ Կարինէն..

Դու միմուճար, իմ միակ սեր,
Յարսնեճաղիկ, կապոյտ նեկ-
տար

Լցրի հոգիս յոյս ու կրակ
Մութ օրերս թեւերիդ առ (ար):

Բաւական առատ է Գագիկ
Կարապետեանի արձակ գործերի
ցանկը: Բացի մի քանի ծաւալուն
պատմուածք-նովելներից, քիչ չեն
առօրեայ կեանքից վերցուած ման-
րապատմաները: Այդ ամէնը կար-
գալուց յետոյ, վերադառնալով բա-
նաստեղծ Կարապետեանին, համոզ-
ուեցի, որ նա մտածում է արձակ
մտածողութեամբ, բայց ասելիքը
թղթին է յանձնում չափածոյի տես-
քով: Այդ պատճառով էլ նրա
բանաստեղծութիւնները չափազանց
դիւրին է ընթերցելը: Ամէն ինչ,
ամէն մի միտք կամ պարբերու-
թիւն ընթերցում է արձակի պէս:
Շատ անգամ հանգ - մանգ էլ չկայ,
մի երեւոյթ, որ բնական է դիտում
մեր շատ բանաստեղծների մօտ:

Վերադառնալով բանաստեղ-
ծի արձակին, աներկբայ կարող եմ
ասել, որ արձակագիր Գագիկ Կա-
րապետեանը բնաւ էլ չի գիշում
բանաստեղծ Գագիկին:

Արձակ գործերի մէջ գլուխ-
գործոց է «Գուգոն» նովելը, որը
իւրաքանչիւր ընթերցողի մօտ
առաջ է բերում հոգեկան ԺԱԺԲ-
ԵՐԿՐԱՇԱՐԺ: «Գուգոն» նովելը
իրական պատմութիւն է, որն իր
մէջ է խտացրել երկրաշարժի ար-
դիւնքում տասնեակ հազարաւոր
զօհերի ողբերգութիւնը:

Սովորաբար, գիւմրեցիք հու-
մորով են լինում, սակայն հումորը
Գագիկի համար չէ: Նրա այս գրքի
«Յոյգերի խաչմերուկ» անուա-
նումն արդէն վկան է մեր ասածի:
Աւետիք Իսահակեանն էլ է գիւմրե-
ցի Որքան ինձ յայտնի է, նա էլ
հումորից «թոյլ» է եղել՝ Գագիկ
Կարապետեանի այս գրքում կան
հետաքրքիր նոր բառեր ու բառա-
կապակցութիւններ, որոնք չվրի-
պեցին իմ աչքից: Ահա դրանցից մի
քանիսը. - ՄԱՇՈՒԱՄ ԿՈՊԵՐ, ՁՄԵ-
ՌԸ ՊԱՏԵՆԵՆ ԷՐ ՀՈԳԻՆ, ՍԻՐՏԸ
ԿՆՃԻՌՆԵՐ ՉՈՒՆԻ, ԳԵՐՈՒԱՄ
ՀՈԳԻ, ՏԱՔ ԱՉՔԵՐԻ ՀԱՐՈՒԱՄ,
են:

Ի վերջոյ, Գագիկ Կարա-
պետեանը իր այս գրքով Հայ
Գրականութեան մէջ ցանկ է
առողջ սերմեր, որոնց հիւթալի
ու ախորժաբեր մրգերը գարդա-
րում են Հայ Գրականութեան ճոխ
սեղանը:

(Զգալի յապաւումներով)

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

«Փոթորիկ Կովկասում». Լոյս է Տեսել 44-օրեայ Պատերազմի Մասին Գրքի Հայերէնը



ԿԱՐԵՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Newmag հրատարակչատունը լոյս է ընծայել «Փոթորիկ Կովկասում» գրքի հայերէն թարգմանութիւնը:

«Փոթորիկ Կովկասում» գիրքը 2020-ի Ղարաբաղեան պատերազմի մասին ուսու, հայ, թուրք եւ միջազգային փորձագէտներէ յօդուածներէ ժողովածու է, որը 2021-ին հրատարակել է Մոսկուայի Ռազմավարութիւններէ եւ տեխնոլոգիաներէ կեդրոնը՝ Ռուսկան Պոլիտիկի ղեկավարութեամբ: Գրքի հայերէն հրատարակութիւնը հովանաւորել է «Թուֆենկեան» հիմնադրամը:

Ինը յօդուածներէ տասներկու հեղինակները քաղաքագէտներ եւ ռազմական փորձագէտներ են, որոնք անդրադառնում են Ղարաբաղեան խնդրի տարբեր անկիւններէ, մարտական գործողութիւններէ ընթացքին եւ խնդիրներին, տարածաշրջանային զարգացումներին:

Պատմական սոցիոլոգ Գէորգի Դերլուզեանը, վերլուծելով պատերազմին նախորդած մի քանի հարիւրամեակի մակրոքաղաքական զարգացումները, անդրադառնում է նաեւ պատերազմի արդիւնքներին ու շեշտում, որ յաղթանակած Ատրպէյճանի տարածքում արդէն չորս բանակ կայ:

«Ինչպէ՞ս է այժմ Պաքուն պատրաստուած իր տարածքում միաւորել չորս բանակ՝ իր սեփականը, թուրք ռազմական փորձագէտներին, ուսու խաղաղապահներին ու հայկական կազմաւորումներէ մնացորդներին: Առանձին հարց է, թէ իրանը ինչ կարող է ձեռնարկել՝ ի պատասխան Ատրպէյճանում իսրայէլցիներէ ներկայութեան»:

Ռուս քաղաքագէտ Սերգէյ Մարկեղոսովը վերլուծում է 2020-ի պատերազմի արդիւնքները տարածաշրջանի համար: Նա նկատում է, որ ընդհանուր առմամբ, Անքարայի դիրքերի ամրապնդումը, բայց առանց Ռուսաստանի՝ Կովկասում ամբողջական թուլացման, ուժեղացում է մերձաւորարեւելեան դինամիկայի ազդեցութիւնը կովկասեան գործընթացներէ վրայ:

Քաղաքագէտ Ալեքսանդր Իսկանդարեանը եւս անդրադառնում է մերձաւորարեւելեան զարգացումներին՝ հարակովկասեան տարածաշրջանի վրայ յարաձուռն ազդեցութեան խնդրին:

«Հայկական լրատուամիջոցներ ընթերցելիս սպաւորութիւն է, թէ Հայաստանը գտնուում է Ատլանտեան ովկիանոսում ինչ-որ տեղ՝ Պրիւսելի, Ուաշինկթընի եւ Պետերբուրգի միջեւ: Մոսկուայի, Աֆրիկայի կամ Թաւրիզի իրադարձութիւններէ մասին մամուլում գրեթէ ոչինչ գրուած է: Իսկ եթէ գրուած է, ապա արեւմտեան կամ ուսուական լրատուամիջոցներէ թարգմանուած նիւթերի տեսքով: Կարող է թուալ, թէ Հայաստանից Պրիւսել կամ Նոյնիսկ վարդիվոստով շատ աւելի մօտ է, քան Աֆրիկայի կամ Իսրայէլ: Հոգեբանօրէն դա այդպէս է, բայց ուղիղ հեռաւորութիւնը Հայաստանից մինչեւ Սիրիայի կամ Իրաքի հիւսիսային շրջաններ աւելի փոքր է, քան Մոսկուայից Պետերբուրգ հեռաւորութիւնը: Մենք առումով Հայաստանը չի ապրում այն տարածաշրջանում, որտեղ աշխարհագրօրէն գտնուում է»:

Մոսկուայի Ռազմավարութիւններէ եւ տեխնոլոգիաների վերլուծութեան կեդրոնի տնօրէն Ռուսկան Պոլիտիկը եւ նրա տեղակալ Կոնստանտին Մակիեւսկին, մասնաւորապէս վերլուծելով պատերազմի ընթացքը, ակնարկում են, որ Ռուսաստանը Ղարաբաղեան երկրորդ պատերազմում պարտուած կողմ է, քանի որ նրա աւանդական ազդեցութեան տիրոջութեան՝ յետխորհրդային տարածքում, թուրքիան միջամտութիւն է ունեցել եւ յաղթանակ տարել Ռուսաստանի դաշնակից Հայաստանի նկատմամբ:

Պոլիտիկ եւ Մակիեւսկի տեսակէտը չի կիսում թուրք վերլուծաբան Քերիմ Հասը՝ նշելով, որ պատերազմից յետոյ Անքարան, չնայած այդքան մեծ մասնակցութեանը պատերազմին, դուրս թողնուեց բանակցութիւններէ սեղանից, որն անցաւ կրեմլի հովանու ներքոյ: Աւելին, Ղարաբաղում ուսու խաղաղապահներ տեղակայուեցին, իսկ թուրքերը սահմանափակվուեցին միայն Աղտամում գործող համատեղ մշտադիտարկման կեդրոնով:

«Չի կարելի հաշուի չառնել նաեւ այսպէս կոչուած՝ Փաշինեանի գործօնը, որը մեծապէս կանխորոշեց ատրպէյճանա-հայկական հակամարտութեանը թուրքական մասնակցութեան վճռականութիւնը: Մի կողմից, թէ՛ թուրքիան, թէ՛ Ատրպէյճանը ի դէմս Նիկոլ Փաշինեանի կերպարի տեսան ուսու-հայկական յարաբերութիւններէ զարգացման հեռանկարի տեսանկիւնից Մոսկուայի շահերին չհամապատասխանող առաջնորդի: Հաշուի առնելով Հայաստանի քաղաքական նոր դեկավարութեան գործողութիւնները 2018-ից յետոյ՝ արեւմտեան ինստիտուտներէ հետ համագործակցութեան ընդլայնման օգտին քաղաքական վեկտորի փոփոխութիւնը, ուսուական հեռուստաալիքներէ հեռարձակման սահմանափակումը, ինչպէս նաեւ Ռուսաստանի նկատմամբ վարուող քաղաքականութեան ընդհանուր մթնոլորտը՝ Անքարան եւ Պաքուն կանխազուշակել էին, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան բաց փուլի

Շար.ը էջ 15

Հայ Քոյրերու Վարժարանի 2021-2022 Տարեշրջանի Ամալերջի Հանդէսներ Եւ 37-րդ Հունձքի Եւ Վկայականներու Բաշխում



2021-2022 տարեշրջանը հասաւ իր աւարտին: Հայ Քոյրերու Վարժարանը «Դանիէլեան» սրահին մէջ երեք հանդէսներով նշեց այս տարեշրջանի աւարտը՝ նախամանկապարտէզի, մանկապարտէզի եւ 8-րդ՝ աւարտական կարգի աշակերտներուն համար:

Արդարեւ, Շաբաթ, 18 Յունիսի երեկոյեան, նախամանկապարտէզի 32 սիրասուն երեխաներ 45 վարկեան տեւողութեամբ յատուցուող մը հանդէս եկան փունջ մը երգերով եւ ասմունքով. «Small Word», «Հայ Մանուկ», «Friends», «Come to the party», «Մանկապարտէզում», «Մայրիկիս» եւ «Հայրիկ Սիրուն»:

Յայտագիրը իր ճոխութեան գագաթնակէտին հասաւ հայկական

շարք մը պարերով: Նախամանկապարտէզի տնօրէնուհին Տիկ. Գարին Փիլաւեան սրտի խօսքին մէջ շեշտեց, որ մանուկներու աճման հիմքը կը դրուի այս փոքր հասակին:

Օրուան յայտագիրը փակեց վարժարանի ընդհանուր պատասխանատու Քոյր Լուիզա Գասարձեան, շնորհակալութիւն յայտնելով ուսուցչուհիներուն եւ ծնողներուն:

Կիրակի, 19 Յունիս 2022-ին, տեղի ունեցաւ 8-րդ կարգի ամալերջի եւ վկայականներու բաշխան հանդիսութիւնը:

Վարժարանի տնօրէն Դոկտ. Խուլիօ Թէյջը շնորհակալութիւն յայտնեց Անարատ Յղութեան Միաբանութեան քոյրերուն, որոնք աշակերտները կը ներշնչեն ապրե-

լու բարոյականութեամբ հարուստ կեանք մը, հիմնուած կարգ ու կանոնի, մարդկութեան հանդէպ սիրոյ վրայ: Տնօրէնը նաեւ շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք կը համագործակցին ու կ'աջակցին ուսուցչիներուն եւ ամբողջ անձնակազմին: Դոկտ. Թէյջը շնորհակալական խօսք ուղղեց նաեւ վարժարանի ուսուցչիներուն, որոնք անսահման նուիրումով ե'ւ օգնեցին աշակերտներուն, ե'ւ ուսուցանեցին, ե'ւ սիրեցին զանոնք: Ան իր խօսքի աւարտին յաջողութիւն մարտնչեց աշակերտներուն եւ նշեց, որ յոյս ունի լսելու անոնց աւելի բարձր վկայականներուն մասին:

Անուհետեւ, հայերէնով սրտի խօսք փոխանցեց փոխտնօրէնուհի Տիկ. Ռիթա Պոյաձեան: «Ճանչցէք

ձեր կարողութիւնները, զարգացուցէք զանոնք, ամրապնդեցէք եւ զանոնք դարձուցէք այն ամուր քարը, որուն վրայ պիտի կերտէք ձեր ապագան: Եւ ես վստահ եմ, որ այդ ուղղութեամբ քալելով պիտի հասնիք ձեր բոլոր նպատակներուն, եւ մենք ապագային առիթը պիտի ունենանք ուրախանալու եւ հպարտանալու, որ օր մը բոլորդ եղած էք Հայ Քոյրերու Վարժարանի աշակերտներ, ըսաւ ան: Տիկ Պոյաձեան խնդրեց իւր քանչիւրէն, որ հայերէնը դարձնեն իրենց ամէնօրեայ լեզուն, «որովհետեւ առանց մեզմէ ամէն մէկուն ջանքին, զանոնք պահելը դժուար պիտի ըլլայ: Եւ ապագային հայ ընտանիքներ

Շար.ը էջ 15

ՄԼՍ. Լուկաս Սելարաեանի Կոլը Ու Կոլային Փոխանցումը



Հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութեան «Քոլումպոսը» 2:0 արդիւնքով պարտութեան մատնեց «Սինսինատիին»:

Հայաստանի հաւաքականի 30-ամեա՝ կիսապաշտպան Լուկաս Սելարաեանը դարձաւ կոլի եւ կոլային փոխանցման հեղինակ: Կոլը ան նշանակեց է 86-րդ վայրկեանին 11 մեթրանոցէն:

Արեւելեան քոնֆերամսէն ներս հանդէս եկող «Քոլումպոսը» 20 խաղէն յետոյ 29 կէտով 6-րդ տեղը կը զբաւ:

Լեւանդովսկին Կը Միանայ «Պարսելոնային»

Գերմանիոյ ախոյեան Միւնխի «Պայլընի» մարզական տնօրէն Հասան Սալիհամիշիչը հաստատած է, որ համաձայնութեան հասած են Սպանիոյ փոխախոյեան «Պարսելոնայի» հետ, եւ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանդովսկին կը տեղափոխուի կատալոնական ակումբը:



Ան Մայամիի մէջ կը միանայ «Պարսելոնային», որը մեկնած է մրցաշրջագայութեան:

«Ռոբերտը հրաշալի էր «Պայլընի» հետ: Մենք մնացուն բանակցութիւններ ունեցանք «Պարսելոնայի» հետ եւ հարթեցինք համաձայնութեան բոլոր մանրուքները: Լեւանդովսկին կը մեկնի ԱՄՆ: Յետոյ ան վերջին անգամ կ'այցելէ Միւնխի, եւ մենք միասին սուրճ կը խմենք: Լեւանդովսկուն կը մաղթենք ամենայն բարիք», - Սալիհամիշիչի խօսքը կը մէջբերէ «Պաւարիայի» մամուլի ծառայութիւնը:

Կը սպասուի, որ 33-ամեայ ֆուտպոլիստը 3 տարուայ պայմանագիր կը կնքէ «Պարսելոնայի» հետ:

Ադամեանը «Քիոլնի» Սեկնարկային Կազմէն Խաղաւ «Միլանի» Դէմ

Իտալիոյ ախոյեան «Միլանը» ընկերական հանդիպում ունեցաւ Պոնտեպրետեան ներկայացնող «Քիոլնի» հետ:



Քիոլնի մէջ տեղի ունեցած խաղին 2:1 արդիւնքով առաւելութեան հասան հիւրերը: «Միլանէն» երկու կոլի հեղինակ դարձաւ 35-ամեայ ֆրանսացի յարձակող Օլիվիէ Ժիրոն, որ աչքի ինկաւ 16-րդ եւ 36-րդ վայրկեաններուն:

«Քիոլնի» նորեկ, Հայաստանի հաւաքականի յարձակող Սարգիս Ադամեանը մեկնարկային կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ առաջին խաղակէսին: 40-րդ վայրկեանին ան զգուշացուեցաւ դեղին քարտով:

«Ինթերը» Խուսափեցաւ Պարտութենէն Միսիթարեանը Սեկնարկային Կազմին Մէջ Եր

Իտալիոյ փոխախոյեան Միլանի «Ինթերը» Ֆեռարայի մէջ ընդունեց Ֆրանսայի առաջնութիւնը ներկայացնող «Մոնպէրիան» եւ բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով՝ 2:2:

Հիւրերը արդէն 7-րդ վայրկեանին բացին հաշիւը ռուս կիսապաշտպան Ալեքսանտր Գոլովինի կոլի շնորհիւ: 30-րդ վայրկեանին «Մոնպէրիան» առաւելութիւնը կրկնապատկեց ֆրանսացի յարձակող Վիսան Պենիեթը:

42-րդ վայրկեանին տարբերութիւնը կրճատեց «Ինթերի» իտալացի կիսապաշտպան Ռոբերտո Գալլարդինին: Հաւասարութիւնը վերականգնեց «Ինթերի» նորեկ, սպանացի կիսապաշտպան Քրիստիան Ասլանին:

Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Միսիթարեանը «Ինթերի» մեկնարկային կազմին մէջ էր եւ փոխարինուեցաւ 60-րդ վայրկեանին:

ԱԱ-2022. Զամայքան Նուաճեց Կանանց 100 Մետր Վազքի Բոլոր Մետալները




ԱՄՆ-ի Օրեկոն նահանգի Եուճին քաղաքին մէջ շարունակելով աթլետիկայի աշխարհի առաջնութեան, ճամայքային մարզուհիները նուաճեցին 100 մետր վազքի բոլոր մետալները:

10-րդ ոսկէ մետալն աշխարհի առաջնութիւններուն նուաճեց եռակի ողիմպիական ախոյեան Շելլի-էն Ֆրեյզեր-Փրայսը: Ան ցոյց տուաւ 10,67 վայրկեան արդիւնք՝ աշխարհի առաջնութիւններու մրցանիշ: Երկրորդ տեղը զբաւեց Շերիկա Ճէքսոնը՝ 10,73 վայրկեան: Երրորդ տեղը զբաւեց Էլեն Թոմսոն-Հերան՝ 10,81 վայրկեան:

Շելլի-էն Ֆրեյզեր-Փրայսը 100 մետր վազքին դարձաւ աշխարհի հնգակի ախոյեան:

ԱԱ. Ֆրետ Քերլին Առաջին Անգամ Նուաճեց 100 Մետր Վազքի Ախոյեանի Տիտղոսը

Ամերիկացի արագավազորդ Ֆրետ Քերլին առաջին անգամ ըլլալով նուաճեց 100 մետր վազքի աշխարհի ախոյեանի տիտղոսը: ԱՄՆ-ի Օրեկոն նահանգի Եուճին քաղաքին մէջ ընթացող աշխարհի առաջնութեան 27-ամեայ աթլետը եզրափակիչին ցոյց տուաւ 9,86 վայրկեան արդիւնք: Անոր լաւագոյն արդիւնքն այս մրցաշրջանին եղած էր 9,76 վայրկեան:



Երկրորդ եւ երրորդ տեղերը եւս զբաւեցին ԱՄՆ-ի ներկայացուցիչները: Ֆրետ Քերլի (ԱՄՆ)՝ 9,86 Մարվին Պրեյսի (ԱՄՆ)՝ 9,88 Թրէյվոն Պրոմել (ԱՄՆ)՝ 9,88

«Միլանը» Երկարաձգեց Պայմանագիրը Զլատան Իպրահիմովիչի Հետ

Իտալիոյ ախոյեան «Միլանը» նոր պայմանագիր կնքած է խումբի շուէտ յարձակող Զլատան Իպրահիմովիչի հետ: Այն նախատեսուած է մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը: Իբրահիմովիչը կը շարունակէ հանդէս գալ 11 համարի խաղաշապիկով:

40-ամեայ ֆուտպոլիստը կը վերականգուի ծունկի վիրահատութենէն յետոյ: Անոր վերադարձը խաղադաշտ կը սպասուի Նոյեմբերին:

Անցած մրցաշրջանին Իպրահիմովիչը «Միլանի» հետ մասնակցած է 27 հանդիպման, նշանակած է 8 կոլ, կատարած է 3 կոլային փոխանցում: Իպրահիմովիչի նախորդ պայմանագիրը նախատեսուած էր մինչեւ Յունիսի 30-ը:

«Մանչեսթըր Եունայթըտի» Յաղթանակը՝ 4:1

Անգլիական «Մանչեսթըր Եունայթըտը» նախապատրաստական փուլի երկրորդ հանդիպումը կատարեց՝ Աւստրալիայի մէջ մրցելով «Մելբուրն Վիքթորի» հետ: Հոլանտացի էրիկ Տեն Հակի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 4:1 արդիւնքով:

Նախապատրաստական փուլի առաջին խաղին «Մանչեսթըր Եունայթըտը» Թայլանտի մայրաքաղաք Պանգքոքի մէջ 4:0 արդիւնքով պարտութեան մատնած էր Անգլիոյ փոխախոյեան «Լիվերփուլին»:

Վերների Եւ Մաունթի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին «Չելսիին»

Լոնտոնի «Չելսին» Լաս Վեկասի մէջ ընկերական հանդիպում ունեցաւ մեքսիկական «Ամերիկայի» հետ:

2:1 արդիւնքով առաւելութեան հասաւ գերմանացի թոմաս Տուխելի գլխավորած խումբը:

«Չելսիէն» աչքի ինկած են գերմանացի յարձակող Տիմո Վերները եւ անգլիացի կիսապաշտպան Մեյսըն Մաունթը:

ՄԱՅԱԶԴ



ՅԱՐՈՒԹԻԻՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ (1930-2022)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ եղբօր՝ **ՅԱՐՈՒԹԻԻՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ** մահը որ պատահեցաւ Յուլիս 12, 2022ին:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, Յուլիս 29, 2022ին առաւօտեան ժամը 9:30ին Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Սպիտակ եկեղեցւոյ մէջ, 6300 Forest Lawn Drive, Los Angeles CA 90068:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Մայրանուշ Սողոմոնեան
- Դուստրը՝ Տիկ. Մարալ Տարագճեան եւ զաւակունք Ջաւահիր՝ Տէր եւ Տիկ. Սեւակ եւ Elda Սողոմոնեան
- Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Կարինէ Եսահեան եւ զաւակունք
- Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Սալբի Պիլանճեան եւ զաւակունք
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Նորայր եւ Անահիտ Սողոմոնեան եւ զաւակունք (Canada)
- Տէր Տաթև Քհնյ. եւ Տիկ. Արաքսի Թաթուլեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Խպոյեան եւ զաւակունք
- Տիկ. Գարմէն Գօփուշեան եւ զաւակունք
- Տիկ. Մակի Գօփուշեան եւ զաւակունք
- եւ համայն Սողոմոնեան, Գօփուշեան, Տարագճեան, Մաթոսեան, Պարսամեան, Կիւրիւնեան, Կէօզէրեան, Մեհրապեան, Թաթուլեան, Պիլանճեան եւ Եսահեան ընտանիքներ:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԻԻՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս»-ի խմբագրութիւնը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկին Մայրանուշ Գօփուշեան Սողոմոնեանին, Արժ. Տ. Տաթև Ա. Քհնյ. եւ երէցկին Արաքսի Թաթուլեանին, ինչպէս նաեւ ընտանեկան համայն պարագաներուն:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՅԱԿՈՒ ՏԱՔԷՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկին Ովսաննա Խաչատուրեան-Տաթևեանին, զաւակներուն եւ յատկապէս աներորդիին՝ Արժ. Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեանին ու ընտանեկան համայն պարագաներուն:

Հայ Քոյրերու Վարժարանի

Շարունակուած էջ 13-էն

կազմեցէք, հայ զաւակներ դաստիարակեցէք, որպէսզի հայրենիքէն հեռու այս ափերուն մէջ հայը հայ մնայ: Ինչպէս որ ձեր ծնողները, որոնց շնորհակալ ենք, ձեզ ուղարկեցին հայկական վարժարան, դուք ալ հետեւեցէք իրենց օրինակին, ըսաւ փոխտնօրէնուհին:

Ցորդ դասարանի խօսք անգլերէնով փոխանցեց իմ մա Մարկոսեան, իսկ Արին Քարագեան՝ հայերէնով: Անոնք երկուքն ալ իրենց երախտագիտական խօսքերը փոխանցեցին թէ՛ իրենց ուսուցիչներուն եւ թէ՛ իրենց ծնողներուն:

Յայտագրին ընթացքին աւարտական աշակերտները ներկայացուցին «Կիլիկիա», «Ուխտ Արարատին» եւ «The Road Not Taken»:

Հիւր բանախօսն էր վարժարանիս 2006-ի շրջանաւարտ Տոբթ. Հայկ Այնթապեան, որ փայլուն անուն մըն է գիտութեան աշխարհին մէջ: Ան, մէջբերելով իր անձնական փորձառութենէն, ըսաւ որ մարդ ինչքան ալ բարձրագոյն

ուսումնարաններ յաճախէ, անպայման մեծ սիրով կը յիշէ իր մանկութեան, իր առաջին քայլերուն մէջ իր ձեռքը բռնած եւ ճամբայ ցոյց տուած վարժարանը:

Վարժարանիս ընդհանուր պատասխանատու Քոյր Լուիզա Գասարճեան իր սրտի խօսքը արտայայտելով ըսաւ. որ վարժարանը միշտ եղած է այն աստղը, որ կը լուսաւորէ միտքերը, կ'ուղղէ սրտերը դէպի լաւին եւ կը ներշնչէ հաւատք, յոյս ու սէր, այն երեք առաքինութիւնները, որոնք հիմը կը կազմեն կեանքի արժէքներուն: Քոյր Լուիզա նաեւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ուսուցչական կազմին, իրենց տածած սիրոյն հանդէպ այս մանուկներուն եւ պատանիներուն, անոնց անսահման համբերութեան բոլոր տարուայ ընթացքին Աւարտին տեղի ունեցաւ պարգևատրում, որուն յաջորդեց վկայականներու բաշխումը 15 շրջանաւարտներու:

Իսկ Ուրբաթ, 24 Յունիսին, ուսուցչուհիներ Տիկ. Թամար Հանտեանի, Օրիորդ Այանա Համամճեան

«Փոթորիկ Կովասում»

Շարունակուած էջ 13-էն

դէպքում կրեմ լի աջակցութիւնը Փաշինեանին գուսպ է լինելու: Միւս կողմից, դարաբաղեան պատերազմի վերաբերեալ իր դիրքորոշման մէջ Ռուսաստանի դեկավարութիւնը կարող էր նաեւ հնարաւորութիւն տեսնել Հայաստանի քաղաքական վերնախաւին դաս տալու եւ որոշ առումով թուլացնելու նրա դիրքերը ներքաղաքական դաշտում», - գրում է Քերիմ Հասը:

Լէոնիդ Ներսիսեանը եւ Մարկ Քազալեթն անդրադառնում են պատերազմում ԱԹՄ-ների լայնածաւալ կիրառման խնդրին: Ընդունելով Ատրպէյճանի ակնյայտ առաւելութիւնը օդում՝ նրանք ընդգծում են նաեւ, որ հայկական ՀՕՊ-ն անպատրաստ էր դրանց դէմ պայքարելուն, եւ հայկական հրամանատարութիւնը պատշաճ չէր ուսումնասիրել անօդաչուների կիրառման այլ դէպքերը (օրինակ՝ Լիպիայում, Սիրիայում, Սաուդեան Արաբիայում՝ հովիտների կողմից), որպէսզի առնուազն գոնէ արդիւնաւէտ պաշտպանութիւն կազմակերպեր իր մարդուժի եւ տեխնիկայի համար:

Անօդաչուների խնդրին է անդրադառնում նաեւ բրիտանացի մասնագէտ Դուգլաս Բարին: Կարեւորելով դրանց դերը՝ նա, այնուամենայնիւ նշում է, որ չի կարելի գերազնահատել այն: Բարին գրում է.

«Հետախուզական եւ հարուածային ԱԹՄ-ների շարունակական տարածումը (ինչը միանշանակ է) իր հերթին աւելի է խթանելու դրանց դէմ ակտիւ միջոցներ մշակելու ջանքերը: Թէեւ «Bayraktar TB2»-ի նման համակարգերը իրենց լաւ դրսեւորեցին օդային տարածքում, որտեղ նրանք չունէին մրցակիցներ, եւ որը պատշաճ չէր պաշտպանում, այս դասի ԱԹՄ-ները գնալով առաջնահերթ նշանակէտ են դառնալու հաւանական որեւէ հակառակորդի մարտական աւիացիայի եւ ցամաքային ՀՕՊ-ի համար: Հարուածների նշանակէտ են դառնալու նաեւ ԱԹՄ-ների օժանդակ ենթակառուցումները եւ վերգետնեայ կայանները՝ ֆիզիքական, էլեկտրամագնիսական կամ երկուսը՝ միաժամանակ»:

Հարցեր, որոնց պատասխանները կարելի էր են հայերիս համար:

Հայ ընթերցողի համար գիրքը նոր հարցադրումներ է առաջ բերում՝ ինչո՞ւ պատերազմն այդքան կործանարար եղաւ հայկական կողմի համար: Ինչո՞ւ հայկական

ՀՕՊ-ը չկարողացաւ դիմակայել հակառակորդի ԱԹՄ-ներին: Ինչո՞ւ հայկական ռազմական միտքը չէր ուսումնասիրել թուրքիայի մարտավարութիւնը քրտերի դէմ՝ մօտաւորապէս այնպիսի տեղանքում, ինչպիսին Ղարաբաղի աշխարհագրութիւնն է: Ինչո՞ւ հայ զինուորականութիւնը ծանօթ չէր անօդաչուների կիրառմանը այլ հակամարտութիւններում: Ինչո՞ւ էր հայկական ռազմաօդային ուժերի եւ ՀՕՊ-ի միջեւ կապն ու կառավարումն այդքան թույլ, երբ հայերը քանիցս իրենք իրենց թուշող սարքերը խոցեցին, ինչո՞ւ Ռուսաստանը աւելի որոշիչ աջակցութիւն չցուցաբերեց իր դաշնակից Հայաստանին: Ո՞րն է հայկական դիւանագիտութեան սխալը եւ այլն:

Գիրքն ընթերցելիս հարցեր են առաջանում պատերազմի սկզբի, ընթացքի ու յետագայ զարգացումների քաղաքական, դիւանագիտական կողմի մասին:

«Փոթորիկ Կովասում»-ը սեղանի գիրք է թեմայով հետաքրքրողներին համար:

«Փոթորիկ Կովասում» գիրքը ոչ ամբողջական, բայց բաւական լաւ ու յստակ պատկեր է տալիս Ղարաբաղեան երկրորդ պատերազմի բազմաթիւ կողմերի մասին: Ռազմագիտական այսօրինակ լուրջ անդրադարձ դեռ չի կատարուել պատերազմին, առաւել եւս՝ հայկական նախաձեռնութեամբ ու հայերի կողմից:

Այնուամենայնիւ, կարելի է շեշտել մի քանի կարեւոր աշխատանք, որ արուել է մինչ այժմ:

Դրանց շարքում են «Հայաստանի պարտութեան պատճառները 2020-ի պատերազմում: Հարցեր, որոնց պատասխանները կ'օգնեն կանխել ձախողման կրկնութիւնը» աշխատանքը, ինչպէս նաեւ Ժիրայր Լիպարիտեանի դեկավարութեամբ պատրաստուած «2020-ի Ղարաբաղեան պատերազմը եւ Հայաստանի ապագա արտաքին ու անվտանգային քաղաքականութիւնը» հետազոտութիւնը:

Չնայած այս կարեւոր փորձերին՝ հայկական հանրութիւնը դեռեւս չունի պատերազմում պարտութեան ու յետագայում դրա կրկնութիւնը բացառելու հարցերի պատասխանները:

«Փոթորիկ Կովասում»-ը սեղանի գիրք է բոլոր նրանց համար, ում հետաքրքրում է 2020-ի պատերազմում հայերի պարտութեան պատճառները եւ դասերը:

Թարան եւ դառնան Ա. դասարանի աշակերտներ:

Վարձքը կատար, Հայ Քոյրերու Վարժարանի տնօրէնութեան եւ ուսուցչակազմին, որոնց տքնաջան ու նուիրուած աշխատանքին արգասիքն էին երեք հանդիսութիւններով, որոնցմով եզրափակուեցաւ 2021-2022 տարեշրջանը՝ դիմաւորելու համար յառաջիկայ նոր ու խոստմանալից տարեշրջաններ:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
 Masis2@earthlink.net (626) 797-7680



ARMENIAN INDEPENDENCE DAY Festival

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

ՓԱՌԱՍՏՈՆ

SUNDAY, SEPTEMBER 18, 2022

STARTING AT 11:00AM

VERDUGO PARK / GLENDALE

1621 CANADA BLVD, GLENDALE, CA 91208

ORGANIZED BY

NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

**LIVE
MUSIC**

**ARMENIAN
FOOD**

**KIDS
GAMES**

**ART
EXHIBITION**

HOSTED BY

LILIT SARGSYAN

To reserve your vendor booth
please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցեք

Նոր Սերունդ Մշակութային Միության

(818) 391-7938

FREE ADMISSION / ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ